



Պաշտոնաթերթ՝  
Ս. Դ. Հնչակեան Կուսակցության  
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly  
1060 N. Allen Ave. Suite 101  
Pasadena, California 91104

### ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

#### Համերաշխության Նախապայմանները

Հայաստանի քաղաքական թատերաբեմին վրայ տեղի ունեցող իրադարձությունները կու գան հաստատելու, որ տակալին երկար ժամանակի կը կարօտի նախկին իշխանություններու ձգած ծանր ժառանգության հետևանքներն ձերբազատուելու համար:

Անցեալ շաբաթ իր տան մէջ յայտնաբերուեցաւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին տնօրէն, 38-ամեայ Կեորկի Կուտոյեանի դին՝ իրեն պատկանող ատրճանակէն արձակուած կրակոցով: Այս ողբերգական մահը բնականաբար հանրութեան մօտ յառաջացուց տարաբնոյթ մեկնաբանութիւններ: Ոմանք հակուած էին հաւատալու ինքնասպանութեան վարկածին, ուրիշներ չէին բացառեր սպանութեան հաւանականութիւնը, մանաւանդ որ այս դէպքը կը յաջորդէ մի քանի ամիս առաջ ՀՀ նախկին ոստիկանապետ Հայկ Յարութիւնեանի նման պայմաններու տակ մահուան: Եթէ ոստիկանապետի պարագային յստակ կապ կար անոր ու Մարտի 1-ի դատավարութեան հետ, ուր ան որպէս վկայ կանչուած էր հարցաքննութեան, ապա Կուտոյեանի պարագային ոչ մէկ դատական գործընթացի մասնակից չէր ան:

Մինչ իրականապահ մարմինները կը խոստանան դէպքի հանգամանքները պարզելու ուղղութեամբ քանք չխնայել, միւս կողմէ նախկին իշխանութիւններու ներկայացուցիչները ու անոնց արբանեակ լրատուամիջոցները առիթը պատեհ նկատեցին ներկայ իշխանութիւնները ցեխարձակումի ենթարկելու՝ օգտագործելով մաշած նոյն մեղադրանքները, որ իշխանութիւնները երկրէն ներս ստեղծած են անհանդուրժողութեան ու ատելութեան մթնոլորտ, պառակտած են հասարակութիւնը՝ զանոնք բաժնելով սեւերու ու ճերմակներու եւ նման անհեթեթութիւններ: Աւելին, անոնք սկսած են պահանջել, որ վարչապետ Փաշինեան հանդէս գայ համերաշխութեան կոչերով ու այդ ուղղութեամբ քայլեր ձեռնարկէ: Այստեղ կայ սակայն կարեւոր հանգամանք մը: Ընդդիմադիրներու պատկերացուցած համերաշխութեան եւ ժողովուրդի ակնկալութիւններուն միջեւ կան էական տարբերութիւններ, որոնց վրայէն կարելի չէ անկատ անցնիլ: Նախկին ռեժիմի ուզածը այն է որ, պէտք է փակուի Մարտի 1-ի էջը ու դադրին ամբաստանեալներու նկատմամբ դատական հետապնդումները, պետական գանձը կողոպտած ու ժողովուրդը աղքատութեան մատնած

Շար.ը էջ 7

#### Սահմանադրական Փոփոխութիւններու Նախագիծը Հանրաքուէի Կրնայ Դրուիլ Այս Տարեվերջին. Նախարար Բաղասեան

Յունուար 21-ին, Հայաստանի արդարադատութեան նախարար Ռուստամ Բաղասեան խորհրդարանէն ներս լրագրողներուն յայտնեց, որ Կառավարութիւնը մտադիր է սահմանադրական փոփոխութիւններու նախագիծը պատրաստել եւ հանրաքուէի դնել այս տարեվերջին: Նախարարը աւելցուց որ, այս փոփոխութիւնները չեն նախատեսեր կիսանախագահական համակարգին վերադառնալու առաջարկ: Կառավարութիւնը կը կարծէ, որ այնպիսի փոփոխութիւններ նախաձեռնուած են, որոնք անպայման կ'ենթադրեն հանրաքուէի կատարում:

Փոփոխութիւններու շրջափռէն ներս նաեւ Սահմանադրական Դատարանին ու ընդհանուր դատական համակարգին անդրադարձ պիտի կատարուի: Հարցին, թէ ինչպէ՞ս կը նախատեսեն լուծել Սահմանադրական Դատարանի ճգնաժամը, նախարարը պատասխանած է, որ հարցին պիտի անդրադառնան ընդհանուր դատական համակարգի ծիրէն ներս:

«Թէ ոնց կ'անդրադառնանք, ես հիմա ճիշդ չեմ գտնում ասել, դեռ յանձնաժողովը չձեւաւորուած իմ տեսլականը կ'իսել», - ըսած



Հայաստանի Արդարադատութեան նախարար Ռուստամ Բաղասեան

է ան: Ան նշած է, որ ընդհանրապէս դատական համակարգի նկատմամբ պէտք է վստահութիւնը բարձրանայ՝ սահմանելով մոտեւ, թէ ինչ մոտեւի Սահմանադրական ու վճռաբեկ դատարան կը պատկերացնենք, եւ ինչպէս պէտք է բարեփոխումը ըլլայ հիմնովին:

Շար.ը էջ 5

#### Պոլսահայ Միութիւնը Նշեց Հրանդ Տինքի Նահատակութեան 13-րդ Տարելիցը



Հանդիսութեան աւարտին՝ երեկոյի մասնակիցներն ու Պոլսահայ Միութեան ղեկավարները


Արդարութեան եւ ազատութեան մեծ ուսմիտ, Պոլսոյ «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքի նահատակութեան 13-րդ տարելիցին նուիրուած իշխատակի բազմաթիւ հանդիսութիւններ եւ միջոցառումներ տեղի ունեցան թէ Պոլսոյ եւ թէ այլ քաղաքներու մէջ: Կազմակերպութեամբ Լոս Անճելոսի Պոլսահայ Միութեան, Հրանդ Տինքի նահատակութեան 13-րդ տարելիցին առթիւ Կիրակի, Յունուար 19-ին տեղի ունեցաւ միջոցառում, որուն որպէս գլխաւոր

բանաշօս ներկայ եղաւ Պոլսոյ «Ակօս» թերթի հայկական բաժնի գլխաւոր խմբագիր Բազրատ Էսթուքեան:

Արդարեւ Պոլսահայ Միութեան «Հրանդ Տինք» հանդիսատես եկած բազմահարիւր ներկաներուն մէջ կը նշմարուէին գաղութիս հայկական բոլոր յարանուանութեանց առաջնորդներն ու քաղաքական, մշակութային եւ հայրենակցական միութիւններու ղեկա-

Շար.ը էջ 5

#### Եւրոմիութեան Դեսպանը Տպաւորուած Է Հայաստանի Սէջ Ընթացող Դատական Բարեփոխումներով



Եւրոմիութեան Դեսպան Անտրէա Վիքթորիո

Երեւանի մէջ Եւրոմիութեան Դեսպան Անտրէա Վիքթորիոն տպաւորուած է Հայաստանի մէջ ընթացող դատական բարեփոխումներով: Դեսպանը համոզուած է, որ այս ուղղութեամբ կառավարութիւնը հական ջանքեր կը գործադրէ եւ վստահ է որ, ԵՄ-ն կարելոր գործընկեր պիտի ըլլայ այդ գործընթացին:

«Դեկտեմբերին Գործընկերութեան յանձնաժողովի նիստ կայացաւ Պրիւքսէլի մէջ: Կը կարծեմ՝ երկու կողմերը համակարծիք են, որ մենք առաջընթաց կ'արձանագրենք: Բայց այդ չի նշանակեր, որ կրնանք կանգ առնել եւ վաղը այն կրնայ աւարտիլ, պէտք է շարունակել այդ աշխատանքները, այն շատ ժամանակ կը պահանջէ: Դուք այդ կը տեսնէք Հայաստանի կառավարութեան կողմէ, կը հաւաստիացնեմ՝ Եւրոպական միութեան կողմէ ալ նոյնը կը տեսնէք», - ըսած է Վիքթորիոն:

ԵՄ պատուիրակութեան ղե-

Շար.ը էջ 5

#### Արցախի Ընտրութիւնները՝ Մարտ 31-ին

Արցախի նախագահի եւ Ազգային ժողովի հերթական ընտրութիւններու օր յայտարարուած է այս տարուան Մարտ 31-ը: Այս մասին յայտարարած էր Արցախի կեդրոնական ընտրական յանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանեանը:

Ան յղում ըրած է Արցախի Սահմանադրութեանն ու Ընտրական օրէնագիրքին: Նշած է նաեւ, որ Մարտ 31-ի երեքշաբթին յայտարարուած է ոչ աշխատանքային օր:

**ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**Յաւալի Հարուած Սերժ Սարգսեանին. Ժամանակը Սօստեճում է**

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Ես խնդրում եմ, ինձ հանգիստ թողէ՞ք հա՞, կը գայ ժամանակը՝ ինչ հարցի կ'ուզէ՞ք, կը պատասխանեմ, ասել է Սերժ Սարգսեանը ԱԱԾ նախկին պետ Գէորգի Կոտտոյեանի յուղարկաւորութեան ընթացքում իրեն հարցերով մօտեցած լրագրողներին:

Գէորգի Կոտտոյեանի մահը Հայաստանի հանրութեան տարբեր շրջանակներում առաջացրել է ամենատարբեր վարկածներ ու մեկնաբանութիւններ, այդ թւում ծայրայեղ, երբեմն աներեւակայելի, միաժամանակ նաեւ տարածուած բաւականին դիւրին մտավարժանքներով, թէ ում եւ ինչի համար կարող էր ձեռնադրուի լինել ԱԱԾ նախկին պետի մահը:

Գէորգի Կոտտոյեանի մահը թերեւս ցաւալի հարուած է Սերժ Սարգսեանին, հաշուի առնելով հանգամանքը, որ Կոտտոյեանը դիտարկուած է նրա ամենահաւատարիմ մարդկանցից մէկը: Իսկ այն, որ դա հենց այդպէս է, վկայեց երիտասարդ գործչի նշանակումը ԱԱԾ պետի կարեւորագոյն պաշտօնում, ընդ որում պետութեան համար թէ ներքին, թէ արտաքին իրողութիւնների վճռորոշ, ճակատագրական մի շրջափուլում: Աւելին, այդ նշանակման հանգամանքն այնքան կարեւոր էր Սերժ Սարգսեանի համար, որ այն զերծ էր պահուել մամուլի տարատեսակ արտահայտութիւններից, որպիսիք լինում էին կարգաւորի նշանակումների առնչութեամբ:

Աւելին, նշանակման քաղաքական խորհրդանշականութիւնն ընդգծուեց նրանով, որ Սերժ Սարգսեանը դա գոլգորդել էր նոր քաղաքական իրավիճակի առնչու-

թեամբ ծրագրային ելույթով: Թէ իշխանական ամբողջ համակարգի առաջ նախագահի նստավայրում հնչած ելույթը, թէ ԱԱԾ պետի նշանակման հրամանագիրը տեղի ունեցան 2016 թ. փետրուարի 12-ին:

Սերժ Սարգսեանի այդ ելույթը հետաքրքիր էր մի շարք շեշտադրումներով, այդ թւում Հայաստանի ինքնիշխանութեան շուրջ ներքաղաքական կոնսենսուսի անհրաժեշտութեան բարձրաձայնումով:

Յետոյ արդէն, 2016-ի ընթացքում պէտք է տեղի ունենային Հայաստանի համար վճռորոշ զարգացումներ, որոնցից մէկը՝ ապրիլեան քառօրեայ պատերազմը, գործնականում պէտք է դառնար պատերազմ Հայաստանի ինքնիշխանութեան պահպանման համար:

Այդ ժամանակաշրջանի առնչութեամբ զնահատականներն էլ ամենատարբեր են, սակայն ընդգրկուած եւ դրամատիզմով ու նաեւ ողբերգականութեամբ լեցուն այդ շրջափուլում ԱԱԾ ղեկավարի պաշտօնը երիտասարդ գործչի վստահելու խօսում էր Սերժ Սարգսեանի համար նրա կարեւորութեան մասին: Այդ իմաստով, Գէորգի Կոտտոյեանի առեղծուածային մահը փաստացի հարուած է նաեւ Սերժ Սարգսեանին:

Նրա յուղարկաւորութեանը Սարգսեանի՝ լրագրողներին պատասխանը նշանային է: Մի քանի ամիս առաջ Սերժ Սարգսեանն ազդարարեց, որ մօտենում է քաղաքացիների հետ անկեղծ զրոյցի ժամանակը: Գէորգի Կոտտոյեանի մահը Սերժ Սարգսեանի համար այդ առումով արագացում է ժամանակի ընթացքը, թէ՛ հակառակը:

«ԼՐԱԳԻՐ»

**«Աննախաղէպ» Կուրուծիւն**

ԼԻՋԱ ՃԱՂՐԵԱՆ

«Ընդհանուր մաղձոտ մթնոլորտ է ստեղծուած»: Այս գնահատականի հեղինակը ռեբիկաւերժիկականների տարիների կարկառուն «արդարադատ» Յարութիւնեան Դաւիթն է:

Սրանց անիծեալ իշխանութեան տարիներին արեան գետեր էին հոսում, շէնքերի մոլորների մօտ, քարուղռերում, Ազգային ժողովի նիստերի դահլիճում պետական այրեր էին սպանում, Երեւանի կենտրոնում խաղաղ ցուցարարներ էին զնդակահարում, բայց մաղձոտ մթնոլորտն իրօք «ընդհանուր» էր: Իշխանութեան նկատմամբ մաղձոտած կամ անմաղձատելութեամբ էր լցուած հասարակութիւնը, իսկ իշխանութիւնն այնքան էր տարուած թալանով եւ ամէն զնով, նոյնիսկ սպանութիւններով իր թալանը պահելու մոլուցքով, որ ո՛չ նկատում էր իրենց ուղղուած ատելութիւնը, նկատելու դէպքում էլ՝ ո՛չ էլ անհանգստանում էր, թէ ուր կարող է հասցնել իրենց այդ անափ ու մաղձոտ ատելութիւնը:

Իսկ չէին անհանգստանում, որովհետեւ վստահ էին, որ իրենց պախանի ասած՝ ինչքան ուզեն, էնքան խփելու են:

Սխալուեցին: Զրկուեցին իշխանութիւնից: Երկինքը փլուեց գլխներին: Տարիներ շարունակ

ոճիրներ գործած եւ պետութեան ողնաշարը կրծած աւազակախումբը սարսափից կապտեց եւ, «լաւագոյն ելքը յարձակումն» է նշանաբանը վահան դարձրած՝ յարձակուեց նոր իշխանութեան վրայ բոլոր թոյլատրելի ու անթոյլատրելի մեթոդներով:

Թւում էր՝ արժանի հակահարուած կը ստանան: Թւում էր՝ կը պատժուեն մէկիկ-մէկիկ: Թւում էր՝ առնուազն Հայաստանի միակ հեռուստաընկերութիւնը, որ պետականում է հանրութեանը, կը լծուի աւազակախմբի յանցաւոր գործունէութեան ամենօրեայ լուսաբանմամբ, լրագրողական հետաքննութիւնն անկաշկանդ վերածնունդ կ'ապրի:

Ինչ ստացաւ մաղձն ու ատելութիւնը թօթափած եւ նոր իշխանութեան գործունէութեան նկատմամբ լաւատեսութեամբ լցուած հասարակութիւնը:

Ստացաւ սկստող եւ դատաքննութեան փուլը չմտնող քրէական գործեր, ձեռքակալուող եւ ազատ արձակուող ամբաստանեալներ, երկիրն ազատօրէն լքող կասկածեալներ եւ աւազակախմբի վարձկանների սնկի պէս աճող լրատուամիջոցներ, որ «ազատ խօսքի» անուան տակ տարածուած են՝ ինչ ուզում են, ոնց ուզում են, սպառնում են՝ ում ուզում են, ոնց ուզում են, եւ չեն խորշում նոյնիսկ ժամանակ առ ժամանակ ֆիզիկական

**Իշխանութեան Ուշացած Լուծումը. Բայց Այլընտրանք Չկայ**

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՄԻ

Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը Սահմանադրական դատարանի շուրջ ստեղծուած իրավիճակի հանգուցալուծման հնարաւոր տարբերակներից մէկը համարում է սահմանադրական փոփոխութիւնները. այս մասին Միրզոյեանն ասել է Ազգային ժողովում լրագրողների հետ զրոյցում:

Փորձագիտական հանրութիւնն իշխանութեանը քանիցս յուշել է, որ դատական ռեֆորմի միակ բանալին սահմանադրական փոփոխութիւններն են, մասնաւորապէս բանից յետոյ, երբ Նիկոլ Փաշինեանի թիմն, ըստ էութեան, իրականութիւն չդարձրեց իր կողմից հնչեցուած մի քանի գաղափար-խոստումներ՝ վեթիթինգը, անցումային արդարադատութիւնը եւ այլն:

«Վաղ կենսաթոշակի մեխանիզմ» նախատեսող «Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրէնքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրէնքի ընդունումից յետոյ Սահմանադրական Դատարանի շուրջ ծաւալուած իրադարձութիւնները բնաւ էլ չեն ընթանում այն սցենարով, որը կանխատեսուած էր իշխանութեան կողմից:

Յամենայն դէպս, առայժմ չկայ որեւէ նշան, որ ՄԴ դատավորներն արձագանքելու են օրէնսդրական այս նախաձեռնութեանը: Բացի այդ՝ վաղ կենսաթոշակի մեխանիզմը ՄԴ-ում ստեղծուած իրավիճակի ամենալաւ հանգուցալուծումը չէ, եթէ չասենք՝ սա վատ օրէնք է, որը միանշանակ չի արձագանքուած միջազգային հանրութեան կողմից եւ աւելի շատ նպաստում է մի կողմից ՄԴ գործող անդամներին, միւս կողմից՝ ՄԴ գործող կազմի ու հին համակարգի կոնսուլիդացիային: Պատահական չէ, որ վենետիկի յանձնաժողովի նախագահ Զիանի Բուքիքիոյի եւ Հրայր Թովմասեանի օրերս տեղի ունեցած տեսազրոյցի թեման ակտիւօրէն տիրաժաւորուեց նախկին համակարգին յարող ՋԱՄ-ների կողմից՝ դա ներկայացնելով թովմասեանին միջազգային աջակցութեան ցուցաբերման համատեքստում:

ՄԴ շուրջ առաջացած ճգնաժամն, անշուշտ, միանգամայն լու-

հաշուեյարդար տեսնելու մասին սպառնալիքներից:

Հակահարուած: Չկայ, գոյութիւն չունի: Եւ եթէ նոյնիսկ լինում է՝ մանկապարտէզի երեխայի ծիծաղելի թոթովանք է չլիչեցնում:

Նախկինները պայքարում են անխոնջ կատաղութեամբ, նորերը պարծենում են իրենց «աննախաղէպութեամբ», իսկ հասարակութիւնն ապշահար մէկ այս կողմն է նայում, մէկ՝ այն, ու լաւատեսութիւնը նահանջում է օրէցօր, ժամ առ ժամ, եւ ուզած-չուզած մտածում է՝ եթէ նախկիններին կործանեց բոլոր եւ ճարպոտած ինքնավստահութիւնը, որ «ինչքան ուզեն, էնքան կը խփեն», ապա նոր իշխանութեանը կործանելու է «աննախաղէպ» ինքնավստահութիւնը. «տեսա՞ք, թէ ոնց յեղափոխութիւն արեցինք, տեսա՞ք, որ ոչ մէկը չկարողացաւ, իսկ մենք կարողա-

ծելի է սահմանադրական փոփոխութիւններով, որոնց միջոցով, ըստ ամենայնի, տրուելու են նաեւ Բարձր դատարանի կազմութեան նոր կարգաւորումները՝ խնդիրը դուրս բերելով քաղաքական բանավէճերի, սահմանադրական նորմերի տարբերութեան հարթութիւնից: Իհարկէ, դժուար է ասել, թէ իրաւական ինչպիսի լուծումներ կը գտնուեն, առհասարակ՝ ինչ ռեֆորմներ կիականացուեն դատական համակարգում եւ այդ ծիրում՝ ՄԴ-ում: Լուծումները բազմաթիւ են, օրինակ՝ փորձագիտական շրջանակներում քննարկուած է վճռաբեկ եւ Սահմանադրական դատարանները միաւորելու եւ Գերագոյն դատարան ստեղծելու տարբերակը, մի քանի այլ վարկածներ եւս: Սակայն բովանդակային քննարկումները թողնենք մասնագէտներին ու արձանագրենք երկու կարեւոր իրողութիւն: Յոյժ կարեւոր է, որպէսզի սահմանադրական փոփոխութիւններն իրականութիւն դառնան քաղաքական եւ հանրային կոնսենսուսի միջավայրում՝ միանգամայն լեզիտիմ հանրաքուէի միջոցով: Սա է այն բանալին, որը կարող է լուծում տալ սահմանադրականութեան հաստատմանն՝ առհասարակ, եւ դատական բարեփոխումներին՝ մասնաւորապէս:

Միւս կողմից՝ սահմանադրական ռեֆորմն աւելի ընդգրկուն, բազմաշերտ գործընթաց է, եւ իշխանութիւնն ամէն ինչ պէտք է անի՝ այն ՄԴ-ի կամ դատական իշխանութեան խնդրով չսահմանափակելու համար:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԵՄԱԿԵԱՆ  
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՂԷ ԱՃԱՊԱՂԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



# ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Սերժ Սարգսեանի Եւ Սիւսներու Գործով Նախաքննութիւնը Աւարտած Է

Յատուկ քննչական ծառայութիւնը (ՅՔԾ) յայտնած է վառելիքի ձեռքբերման նպատակով կատարուած պետական աջակցութեան ծրագիրներով պետութեան անանձնապէս խոշոր չափերով գումար վատնելու վերաբերեալ քրէական գործէն Սերժ Սարգսեանի, Բարսեղ Բեգլարեանի, Սերգոյ Կարապետեանի, Սամուէլ Գալստեանի եւ Գէորգ Յարութիւնեանի մասով անջատուած գործով նախաքննութեան աւարտի մասին: Գործը մեղադրական եզրակացութեամբ յանձնուած է հսկողութիւն իրականացնող դատախազին՝ այն դատարան ուղարկելու միջնորդութեամբ:



ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսեան

«Յատուկ քննչական ծառայութիւնում քննուող քրէական գործի նախաքննութեան ընթացքում ձեռք բերուած բաւարար ապացոյցները համակցութեան հիման վրայ պարզուել է, որ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի կազմակերպմամբ եւ «Ֆլեշ» ընկերութեան սեփականատէր Բարսեղ Բեգլարեանի դրոյմամբ, ՀՀ նախկին գիւղատնտեսութեան նախարարի տեղակալ Սամուէլ Գալստեանի ու նոյն նախարարութեան բուսաբուծութեան վարչութեան պետ Գէորգ Յարութիւնեանի օժանդակութեամբ, ՀՀ նախկին գիւղատնտեսութեան նախարար Սերգոյ Կարապետեանի կողմից 2013 թուականի Յունուարի 25-ից Փետրուարի 7-ն ընկած ժամանակահատուածում ՀՀ կառավարութեան պահուստային ֆոնտից վատնուել է պետական աջակցութեան ծրագրերի իրականացման ընթացքում իրացուած 15.391.765 լիթր վառելիքի համար յատկացուած օժանդակութեան առանձնապէս խոշոր չափերով գումարը՝ 489.160.310

ՀՀ դրամը», - ըսուած է ՅՔԾ հաղորդագրութեան մէջ:

Ըստ ՅՔԾ-ի՝ Սերգոյ Կարապետեանին մեղադրանք առաջադրուած է Քրէական օրէնսգիրքի 179-րդ յօդուածի 3-րդ մասի 1-ին կէտով՝ «Իւրացնել կամ վատնել, որ կատարուած է առանձնապէս խոշոր չափերով», Սերժ Սարգսեանին, Բարսեղ Բեգլարեանին, Սամուէլ Գալստեանին եւ Գէորգ Յարութիւնեանին՝ ՔՕ 38 (յանցակցութիւն)-179-րդ յօդուածի 3-րդ մասի 1-ին կէտով:

Յատուկ քննչական ծառայութիւնը Հայաստանի երրորդ նախագահին կէս միլիարդ դրամ գումարի չափաչափութեան կատարումը կազմակերպելու մեղադրանք առաջադրած է անցած տարուան Դեկտեմբեր 4-ին: Սերժ Սարգսեանի նկատմամբ խափանման միջոց ընտրուած է ստորագրութիւնը չհեռանալու մասին:

## Վարչապետ Փաշինեան Հարցաքննուած Է Գաղտնալսման Գործով

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը ներկայացած է Քննչական կոմիտէի եւ մօտ 2,5 ժամ պատասխանած քննիչի հարցերուն, որոնք կը վերաբերէին 2018 թուականի Սեպտեմբերին ու Դեկտեմբերին համացանցի մէջ տարածուած վարչապետ Փաշինեանի եւ ԱԱԾ նախկին տնօրէն Արթուր Վանեցեանի, ինչպէս նաեւ ՅՔԾ պետ Սասուն Խաչատրեանի եւ ԱԱԾ նախկին տնօրէն Վանեցեանի միջեւ տեղի ունեցած հեռախօսակցի խօսակցութիւններու գաղտնալսման փաստով յարուցուած երկու քրէական գործերուն:



Փաշինեան հարցաքննութեան ընթացքին

Հարցաքննութեան մասին ֆեյսպուքեան գրառմամբ անձամբ տեղեկացուցած էր կառավարութեան ղեկավարը՝ տեղադրելով քննիչի աշխատասենեակին մէջ առնուած ինքնիկը (սելֆին): «Հայաստանի պատմութեան մէջ առաջին անգամ՝ երկրի գործող ղեկավարը Քննչական կոմիտէի հրահրով ներկայացել է եւ քննիչի աշխատասենեակում պատասխանում է նրա հարցերին», - գրած է Փաշինեանը՝ կատակելով. «Քաղաքական հետապնդման տարրերը ակնյայտ են»:

Հարցաքննութեանէն ետք Փաշինեանը չէ պատասխանած լրագրողներու հարցերուն:

Քննչական կոմիտէի մամուլի խօսնակ Նայիրա Յարութիւնեանը «Ազատութեան» փոխանցած է, որ մէկ գործով Նիկոլ Փաշինեանը կ'անցնի որպէս վկայ, միւսով՝ որ-

պէս սուժող: Քննչական կոմիտէի մամուլի խօսնակը նշած է. «ՅԿԳ քննութեան գլխաւոր վարչութեան վարչութիւնում է քննուած նաեւ ԱԱԾ նախկին տնօրէնի եւ ՅՔԾ պետի հեռախօսակցի խօսակցութիւնները ապօրինի գաղտնալսելու եւ համացանցով տարածելու դէպքի առթիւ յարուցուած քրէական գործը, որի շրջանակներում վարչապետ Նիկոլ Փաշինեանը հարցաքննուել է որպէս սուժող՝ ապօրինի գաղտնալսում եւ ձայնագրառումն իրականացնելու ու տեսանիւթը համացանցում տարածելու արդիւնքում իր իրաւունքները եւ օրինական շահերի խախտման եւ գործի համար հետաքրքրութիւն ներկայացնող մի շարք այլ հանգամանքների շուրջ»:

## Տեղի Ունեցաւ Կեորկի Կուտոյեանի Յուղարկաւորութիւնը

Յունուար 20-ին տեղի ունեցաւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին տնօրէն Կեորկի Կուտոյեանի յուղարկաւորութիւնը: Արարողութեան ներկայ եղան նաեւ Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի ու անոր խմբակիցները:



Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին տնօրէն Կեորկի Կուտոյեան

Կուտոյեանի մահուան հանգամանքները պարզելու համար Քննչական կոմիտէն քրէական գործ յարուցած է ինքնասպանութեան հասցնելու յօդուածով: Քննչական կոմիտէի խօսնակ Նայիրա Յարութիւնեանն «Ազատութեան» փոխանցած է, որ գործով կասկածեալներ չկան:

Կիրակի օր ԱԱԾ նախկին տնօրէնի հոգեհանգիստի արարողութեան մասնակցող Հայաստանի գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեան լրագրողներու հետ զրոյցի ժամանակ յայտնած էր՝ լայնածաւալ քննութիւն կ'ընթանայ:

«Ձեռք են բերուել բաւականաչափ տուեալներ ինքնասպանութեան մասին վկայող: Բայց ամբողջ ուղղութեամբ, բոլոր ուղղութիւններով, բոլոր վարկածներով պատշաճ քննութիւնը կ'իրականացուի: Քննութեան ընթացքում որոշակի էական հանգամանքներ ձեռք բերուելու, առաւել եւս՝ քննութեան արդիւնքների մասին, մենք բոլորս, անձամբ եւ ձեզ հետ խօսելու առիթ կ'ունենանք», - նշած էր Դաւթեանը:

Ըստ Քննչական կոմիտէի ձեռք բերած տուեալներու, Կուտոյեանը արտերկիր էր եւ Հայաստան վերադարձած էր Դեկտեմբեր 9-ին: Գալուստ Սահակեանն ըսած է՝ դուրսը կ'ուսանէր, սօսերուն ալ վերադարձած էր տուն:

Կեորկի Կուտոյեանը չի անցնում ո'չ Քննչական կոմիտէի, ո'չ Յատուկ քննչական ծառայութեան, ո'չ էլ Ազգային անվտանգութեան ծառայութեան վարչութիւններում քննուող քրէական գործերով:

38-ամեայ Կեորկի Կուտոյեանը երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի խմբակիցն էր: 2011 թուականին նախագահ Սերժ Սարգսեանի օգնականն էր: Նախագահի 2016 թուականի հրամանագրով Փետրուար 12-ին նշանակուած էր Ազգային անվտանգութեան ծառայութեան ղեկավար՝ փոխարինելով Գորիկ Յակոբեանին, եւ այդ պաշտօնէն ազատուած էր 2018 թուականին՝ Նիկոլ Փաշինեանի նախաձեռ-

## Նայիրի Յունանեանը Նամակ Գրած Է Նիկոլ Փաշինեանին

«Հոկտեմբեր 27»-ի գործով ցմահ ազատագրկման դատապարտուած Նայիրի Յունանեանը նամակ գրած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին: Վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաստատած են, որ նամակը ուղարկուած է Կառավարութիւն:

Միաժամանակ, նամակի բովանդակութեան եւ Կառավարութեան նկատմամբ ստանալու ժամկէտներու վերաբերեալ պաշտօնական աղբիւրը տեղեկութիւն չէ յայտնած:

1999 թուականի Հոկտեմբեր 27-ին անբեկչական յարձակում տեղի ունեցաւ Ազգային Ժողովի վրայ, երբ հերթական նիստին Կառավարութիւնը կը պատասխանէր պատգամաւորներու հարցերուն:

նաժ յեղափոխութեանէն ետք:

Ըստ Քննչական կոմիտէի, Կուտոյեանը ՀՀ վերադառնալէն ետք, ժամանակաւորապէս բնակած է հայրական տունը, սակայն ժամանակ առ ժամանակ այցելած է Պարոյր Սեւակի փողոցին վրայ գտնուող իրեն պատկանող բնակարան: 2019 թուականի Դեկտեմբերի վերջերը Կուտոյեանը առանձին այցելած է այդ բնակարան, ուր, ոգելից խմիչք օգտագործելէ ետք, օրինական կարգով իրեն պատկանող Glock 34 տեսակի ատրճանակէն 35 անկանոն կրակոց արձակած է հիւրասենեակի եւ խոհանոցի բաժանարար պատին: Յետագային, Կուտոյեանի խնդրանքով, վերջինիս կինը կրակուած պարկուճները եւ յայտնաբերուած զնդակները հաւաքած եւ դրած է հիւրասենեակի՝ բազմոցի դիմաց գտնուող սեղանին:

Ըստ իրաւապահներու, Կուտոյեանը 2020-ի Յունուար 16-ին՝ ժամը 15:20-ի սահմաններուն, հայրական տան մօտակայքէն՝ Երեւան քաղաքի Արշակունեաց պողոտայէն վարձակալած թաքսիով ուղեւորուած է Պարոյր Սեւակի իրեն պատկանող բնակարան՝ նախապէս ընտանիքի անդամներուն տեղեկացնելով չի չեղել բնակարանին մէջ երկու-երեք օր հանգստանալու իր մտադրութեան մասին: Յունուար 17-ին Կուտոյեանի հարազատները չկարենալով հեռախօսակապ հաստատել վերջինիս հետ՝ գացած են նշուած բնակարան, ուր Կուտոյեանի կինը հիւրասենեակին մէջ՝ բազմոցին վրայ, յայտնաբերած է անոր դին:

Սպանուեցան Ազգային Ժողովի նախագահ Կարէն Տեմիրճեանը, վարչապետ Վազգէն Սարգսեանը, խորհրդարանի փոխնախագահներ Եւրի Բախշեանը եւ Ռուբէն Միրոյեանը, պատգամաւորներ Արմենակ Արմենակեանը, Միքայէլ Քոթանեանը, Հենրիկ Աբրահամեանը եւ նախարար Լեոնարտ Պետրոսեանը:

Երեք տարի տեւած դատավարութեանէն ետք Նայիրի Յունանեանը եւ անոր յանցախումբի 5 անդամներ դատապարտուեցան ցմահ, մէկը՝ 14 տարուան ազատագրկման:

Անցած տարուան վերջը Դատախազութիւնը բաւարարեց Եւրի Բախշեանի այլի՛ Անահիտ Բախշեանի փաստաբաններու բողոքը «Հոկտեմբեր 27»-ի գործէն անջատուած եւ կարճուած մասով նոր քննութիւն սկսելու վերաբերեալ:



# ԼՈՒՐԵՐ

## Հայ Եւ Յոյն Հոգեւորականներու Միջեւ Հերթական Միջադէպը՝ Բեթղեհեմի Սուրբ Ծննդեան Տաճարին Մէջ

Բեթղեհեմի մէջ շաբաթ երեկոյեան ծեծկոտուք տեղի ունեցած է Հայ առաքելական եւ Յոյն ուղղափառ եկեղեցիներու հոգեւորականներու միջեւ:

«Մօտ 2 տասնեակ յոյն, չունադաւան արաբ հոգեւորականներ ու քաղաքացիական հագուստներով մարդիկ գինուած փայտերով ու երկաթեայ ձողով Շաբաթ երեկոյեան՝ ժամը 7-ի մօտերը փորձած են իրենց մասնաբաժնէն աստիճաններով իջնել ու մուտք գործել Բեթղեհեմի Սուրբ Ծննդեան տաճարի Սուրբ Ծննդեան խորան, ուր կը կայանար հայերու Սուրբ Ծննդեան եկեղեցական արարողութիւնը, եւ փորձած են միջամտել ու խանգարել այն», - այսպէս նկարագրած են եղելութիւնը հայ կանաատեսները: Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի դիւանապետը: Յունական կողմը բողոք ներկայացուցած է Պաղեստինի նախագահի աշխատակազմի քրիստոնէական սրբավայրերու ու իրաւունքներու յանձնաժողովին, իսկ Պաղեստինի նախագահն ալ խնդրանքով դիմած է Հայոց պատրիարքին: «Պաղեստինի նախագահն անձամբ Պատրիարք սրբազանէն խնդրեց, որ միայն այս տարուան համար թոյլ տան, որպէսզի այդ խնկարկութիւնը ըլլայ սրբապատկերով, բայց Պատրիարք սրբազանը համաձայնած է միայն, որ այս տարի այդպէս ըլլայ, պայմանով, որ մեր սրբապատկերը, Աւետարանն ու մոմակալները պէտք չէ տեղաշարժուին կամ հանուին Սուրբ այրէն», - աւելցուցած է հայ վարդապետը:

Շարունակելով ան ըսած է, որ այնուհետեւ երկու ուստիկան, բռնելով յոյներու սրբապատկերը, կանգնած են այրին մէջ, եւ յոյները խնկարկութիւն ըրած են միայն ու հեռացած: Ի դէպ, ծեծկոտուքէն տուժածներ կան, որոնց, առաջին օգնութիւն ցուցաբերուած է:

## Ջոհրապ Մնացականեան. Վաղ է Խօսիլ Փաշինեան-Ալիեւ Նոր Հանդիպան Մասին

ՀՀ արտաքին գործոց նախարար Ջոհրապ Մնացականեանը վաղ կը համարէ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի յաջորդ հանդիպման մասին խօսիլը: «Արմէնբրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին Մնացականեանն ըսած է Յունուար 16-ին լրագրողներու հետ զրոյցի ժամանակ: «Բանակցային գործընթացը շարունակական է, մենք բանակցութիւններինք երբեւէ չենք խուսափել, հակառակը, մենք շատ աշխոյժ ներգրաւուած ենք բանակցային գործընթացներում: Նախարարները մակարդակով եղել են բաւական թուով հանդիպումներ, վարչապետը պաշտօնական հանդիպում է ունեցել մարտին, ոչ պաշտօնական հանդիպումներ են եղել: Մենք հանդիպման մասին յայտարարում ենք միաժամանակ՝ համաձայնագրերի միջոցով: Դեռ վաղ է խօսել Փաշինեան-Ալիեւ հանդիպման մասին: Մենք արտաքին գործերի նախարարները մակարդակով շարունակում ենք աշխատել», - ըսած է Մնացականեանը:

փորձեցին այդ սրբապատկերն ու խնկարկութիւնը միասին իջեցնել դէպի Սուրբ Ծննդեան տաճար, մենք այդտեղ կանգնեցանք եւ թոյլ չտուինք, որ տեղի ունենայ: 24 ժամ մեր Ծննդեան տօնին Սուրբ Այրը մերն է, եւ մեր սրբապատկերը կը տեղադրուի այնտեղ, Աւետարանն ու մոմակալները, եւ ոչինչ կը շարժի այնտեղէն: Ասոնք դարբերով եկած իրաւունք են, սակայն այս տարի անոնք փորձեցին այդ միջամտութիւնը ընել, մենք թոյլ չտուինք, եւ ծեծկոտուք տեղի ունեցաւ, որու հետեւանքով անշուշտ անոնք հեռացան, եւ սրբապատկերը չտեղադրուեցաւ», - պատմած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի դիւանապետը:

Յունական կողմը բողոք ներկայացուցած է Պաղեստինի նախագահի աշխատակազմի քրիստոնէական սրբավայրերու ու իրաւունքներու յանձնաժողովին, իսկ Պաղեստինի նախագահն ալ խնդրանքով դիմած է Հայոց պատրիարքին: «Պաղեստինի նախագահն անձամբ Պատրիարք սրբազանէն խնդրեց, որ միայն այս տարուան համար թոյլ տան, որպէսզի այդ խնկարկութիւնը ըլլայ սրբապատկերով, բայց Պատրիարք սրբազանը համաձայնած է միայն, որ այս տարի այդպէս ըլլայ, պայմանով, որ մեր սրբապատկերը, Աւետարանն ու մոմակալները պէտք չէ տեղաշարժուին կամ հանուին Սուրբ այրէն», - աւելցուցած է հայ վարդապետը:

Շարունակելով ան ըսած է, որ այնուհետեւ երկու ուստիկան, բռնելով յոյներու սրբապատկերը, կանգնած են այրին մէջ, եւ յոյները խնկարկութիւն ըրած են միայն ու հեռացած: Ի դէպ, ծեծկոտուքէն տուժածներ կան, որոնց, առաջին օգնութիւն ցուցաբերուած է:

ՀՀ արտաքին գործոց նախարար Ջոհրապ Մնացականեանը Հայաստանի համար անհանգստացնող կը համարէ տարածաշրջանի մէջ կայունութեան խափանումը: Այս մասին ան ըսած է՝ «անդրադառնալով տարուան սկզբէն Մերձավոր Արեւելքի մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Իրանի միջեւ տեղի ունեցող զարգացումներուն: «Մեզ համար շատ անհանգստացնող է կայունութեան խափանումը մեզ հարեւան տարածաշրջանում: Այդ առումով մենք աշխատում ենք մեր գործընկերների հետ... Մեր անմիջական գործընկերներն ունեն տարածաշրջաններ, եւ դա ազդեցութիւն է թողնում նաեւ տարածաշրջանային անվտանգութեան եւ մեր երկրի անվտանգութեան վրայ: Իրապէս յոյս ունենք, որ միայն խաղաղ եւ բանակցային ճանապարհներով հնարաւոր կը լինի կայունացնել իրավիճակը եւ խուսափել զարգացումներից, որոնք տանում են էսկալացիայի թէժացման», - ըսած է Մնացականեանը:

## Նախագահ Արմէն Սարգսեան Մասնակցած է Տաւոսի Համաշխարհային Տնտեսական Համաժողովի Բացման



ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան Տաւոսի Համաշխարհային Տնտեսական Համաժողովի բացման նիստի ընթացքին

ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան Չուրիցերիոյ Տաւոս քաղաքի մէջ մասնակցած է «Շահագրգիռ կողմերը՝ յանուն աշխարհի համախմբման եւ կայունութեան» խորագրեր կրող Համաշխարհային տնտեսական համաժողովի բացման:

Գործունէութեան 50 տարիներու ընթացքին Տաւոսի ամենամեայ հանդիպումը դարձած է աշխարհի ամենաազդեցիկ բարձր մակարդակի հաւաքներէն մէկը, որ ամէն տարի կը համախմբէ պետութիւններ, կառավարութիւններ, միջազգային կազմակերպութիւններ ղեկավարներ, գործարար հանրու-

թեան ներկայացուցիչներ եւ հեղինակաւոր փորձագէտներ՝ քննարկելու համաշխարհային, տարածաշրջանային եւ արդիւնաբերական օրակարգերը, լուծումներ առաջարկելու առկայ խնդիրներու եւ մարտահրաւէրներու վերաբերեալ: Համաժողովին այս տարի կը մասնակցին աշխարհի տարբեր երկրներէ ժամանած շուրջ 700 բանախօսներ եւ աւելի քան 3000 մասնակիցներ:

Հայաստանի նախագահը ներկայ գտնուած է նաեւ Տաւոսի համաժողովի ծիրէն ներս իրականացուող 26-րդ ամենամեայ Crystal Award մրցանակաբաշխութեան:

## Human Rights Watch. Մարդու Իրաւունքներու Պաշտպանութեան Առումով Հայաստան Դեռ Խնդիրներ Ունի

«Նիկոլ Փաշինեանի կառավարութիւնը ձեռնամուխ եղած է բարեփոխումներու չափազանց քիչ իրագործման՝ այդ շարքին քորուփցիայի դէմ պայքարի, տնտեսական եւ արդարադատութեան ոլորտներուն մէջ», - աշխարհի մէջ մարդու իրաւունքներու կացութեան նուիրուած ամէնամեայ զեկոյցին մէջ նշած են արեւմտեան ամենահեղինակաւոր իրաւապաշտպան կառույցներէն մէկը՝ Human Rights Watch-ի ներկայացուցիչները:

Զեկոյցի հեղինակները անգամ մը եւս ընդգծած են, որ 2018-ի Դեկտեմբերին Հայաստանի մէջ կայացած խորհրդարանական ընտրութիւնները, ըստ միջազգային դիտորդներու գնահատականի, համապատասխանած են միջազգային չափանիշներուն եւ անցած են իրապէս մրցակցային միջոցառումի մէջ: Ատոր հետ մէկտեղ, Human Rights Watch-ի ներկայացուցիչները նշած են, որ մարդու իրաւունքներու պաշտպանութեան ասպարէզին մէջ խնդիրներ եւ թերութիւններ Հայաստանի մէջ դեռ առկայ են: Խօսքը մասնաւորաբար նախորդ վարչակազմի օրօք կատարուած բռնութեան եւ իրաւապահներու կողմէ ուժի անհամաչափ կիրառման դէպքերու քննութեան «սահմանափակ բնոյթի մասին է»:

ցուցարարներու եւ անվտանգութեան ուժերու միջեւ տեղի ունեցած մահաբեր բախումներու հետաքննութիւնը, եւ 2019-ի Յունիսին մեղադրանք առաջադրեցին բարձրաստիճան պաշտօնակցին՝ ցոյցը ցրելու ժամանակ ցուցարարի սպանութեան համար: Այնուամենայնիւ, 2016 եւ 2015 թուականներուն խաղաղ ցուցարարներու եւ լրագրողներու նկատմամբ ոստիկանութեան կողմէ անհամաչափ ուժի կիրառման երկու դէպքի քննութիւնը կը մնայ կասեցուած», - գրուած է զեկոյցին մէջ:

Զեկոյցին մէջ բաւական ծաւալուն անդրադարձ կայ նաեւ ընտանեկան բռնութեան դէպքերուն եւ իրաւապահ համակարգի այս ոլորտին մէջ գործունէութեան: Human Rights Watch-ը չէ շրջանցած նաեւ սեռական փոքրամասնութիւններու եւ անոնց իրաւունքները պաշտպանող աքթիւիստներու դէմ բռնութիւններու դէպքերը: «2019-ի Յունուարէն Օգոստոսն ինկած ժամանակահատուածին Pink Armenia կազմակերպութիւնը եւ LGBT համայնքի շահերը պաշտպանող միւս կառույցները Հայաստանի մէջ սեռական կողմնորոշմամբ պայմանաւորուած 17 ֆիզիքական յարձակման դէպք արձանագրած են», - նշած են զեկոյցի հեղինակները:

Human Rights Watch-ը անդրադարձած է նաեւ Իսթանպուլեան համաձայնագրի շուրջ Հայաստանի մէջ ծաւալած բանավէճին՝ արձանագրելով, որ այդ ընթացքին յաճախակի էր ատելութեան խօսքի կիրառումը:



# «Ակօս» Թերթի Խմբագիր Բագրատ Էսթուքեանի Մամլոյ Ասուլիսը Լոս Անճելոսի Մէջ



Պոլսոյ «Ակօս» թերթի հայկական բաժնի խմբագիր Բագրատ Էսթուքեան ելոյթ կ'ունենայ մամլոյ ասուլիսի ընթացքին

Կիրակի, Յունուար 19-ին, Պոլսահայ Միութեան կեդրոնէն ներս տեղի ունեցաւ Պոլսոյ «Ակօս» թերթի հայկական բաժնի խմբագիր Բագրատ Էսթուքեանի մամլոյ ասուլիսը:

Բացման խօսքով հանդէս եկաւ ու Էսթուքեանի կենսագրական գիծերը ներկայացուց Պոլսահայ Միութեան ղեկավարներէն Տոքթ. Յովհաննէս Քուլակ:

Պր. Էսթուքեան իր ներածական խօսքին մէջ անդրադառնալով «Ակօս»-ի աշխատանքներուն, յայտնեց որ թերթը իւրաքանչեւ երեւոյթ մը եղաւ Հայ լրագրութեան մէջ, նկատի ունենալով, որ անոր պաշտօնական լեզուն թրքերէն է եւ միայն չորս էջեր լոյս կը տեսնեն հայերէնով: Ըստ խմբագրի, թրքերէն լեզուով հայկական թերթ հրատարակելը դարձած էր անհրաժեշտութիւն, նկատի ունենալով որ թուրքերէն հայութեան կարեւոր մէկ մասը դադրած է հայախօսութենէ եւ գործի է հայերէն ընթերցելու կարողութենէն: Այս իրողութենէն մեկնելով, Հրանդ Տինք 1996 թուականին որոշեց հրատարակել «Ակօս»-ը, բաւարարելու համար հայութեամբ հետաքրքրուողներու պահանջը:

Պատասխանելով լրագրողներու հարցերուն, «Ակօս»-ի խմբագիրը յայտնեց թէ, իրենք եւս համաձայն էին թրքական խորհրդարանի անդամ Կարօ Փայլանի տեսակէտին հետ, որ Պոլսոյ պատրիարքի ընտրութիւնը պէտք է իրականար թրքական կառավարութեան պարտադրած պայմաններով, որու հետեւանքով շարք մը արժանաւոր եկեղեցականներ զրկուեցան ընտրութիւններուն մասնակցելու իրաւունքէն: Սակայն, այն համաձայն չգտնուեցաւ այն տեսակէտին հետ որ, պէտք է ընդունիլ նորընտիր պատրիարքը:

## Ելրոմիութեան Դեսպանը Տպաւորուած Է

Շարունակուած էջ 1-էն

կավար, դեսպան Անտրէա Վիքթորինը նկատած է, որ առաջընթաց կայ նաեւ մարդու իրաւունքներու պաշտպանութեան ոլորտի մէջ, սակայն ընդգծած է՝ դեռ ընելիք կայ: «Ես համեմատելու բան ունիմ: Կը կարծեմ, որ մարդու իրաւունքներու վիճակը Հայաստանի մէջ իսկապէս բարելաւուած է, սակայն ընդգծեմ՝ բազմաթիւ բա-

«Ինչ որ ալ ըլլան պայմանները, մենք չենք կրնար անտեսել 13 հազար ժողովուրդի տեսակէտը, որոնք եկած էին մասնակցելու ընտրութիւններու», ըսաւ Էսթուքեան:

Գաւառներու մէջ ապրող իսլամացած հայերու իրենց արմատներուն վերադառնալու մասին խօսելով Էսթուքեան յայտնեց, որ կողմնակից է, որպէսզի ցանկութիւն ունեցողներու խնդրանքը բաւարարուի եւ ինք անձնապէս կնքահայր եղած է մօտ 15 հոգիներու, որոնք մկրտուած են որպէս հայ: Ան սակայն ըսաւ, որ կան կարգ մը եկեղեցական եւ աշխարհական շրջանակներ, իւրաքանչիւրը տարբեր պատճառաբանութեամբ, որոնք կ'ընդդիմանան ընդունիլ իրենց ինքնութեան վերադառնալու ցանկութիւն յայտնողներու դիմումներուն ընդառաջել եւ կամ անոնց կը պարտադրեն կրօնական երկարատեւ դասընթացներ: «Մեզի համար այս պարագան ազգային հարց է, իսկ եկեղեցին անոր կը մօտենայ կրօնական տեսանկիւնէ», ըսաւ «Ակօսի» խմբագիրը:

Բագրատ Էսթուքեան նաեւ տեղեկացուց, որ ներկայիս Պոլսոյ մէջ կը գործեն հայկական 15 դպրոցներ, որոնք կը հետեւին թրքական կրթական ծրագիրներուն: Ասոնց կողքին կայ նաեւ մէկ հայկական դպրոց, ուր կը յաճախեն ընդհանրապէս Հայաստանէն հոն հաստատուած ընտանիքներու զաւակներ, թիւով շուրջ 150 ուսանող: Այս դպրոցէն ներս կը դասաւանդուի Հայաստանի կրթական նախարարութեան ուսումնական ծրագիրը եւ աշակերտները աւարտելէ ետք, կը մեկնին Հայրենիք եւ հոն կը յանձնեն իրենց աւարտական քննութիւնները:

րեփոխումներ կան, որոնք անհրաժեշտ է իրականացնել: Չեն ըլլար մարդու իրաւունքներ, եթէ չկայ իրաւունքի գերիշխանութիւն», - նշած է ԵՄ դեսպանը: Անդրադառնալով ընդդիմադիր որոշ ուժերու ներկայացուցիչներու յայտարարութիւններուն, թէ լրատուամիջոցները ճնշման տակ են, Անտրէա Վիքթորինը ըսած է՝ Հայաստանի մէջ լրատուամիջոցներն ազատ են:

## Պոլսահայ Միութիւնը Նշեց

Շարունակուած էջ 1-էն

վարներն ու ներկայացուցիչները: Հայութեան եւ արդարութեան քաջամարտիկ Հրանդ Տինքի տեսլականին մասին պերճախօս ելոյթով հանդէս եկաւ Արեւմտեան Թեմի Հայց. Եկեղեցւոյ առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Սրտի խօսքերով արտայայտուեցան նաեւ Տօքթ. Յովհաննէս Աւետիքեան, իրաւաբաններ Էստիւն Մինասեան, Ռոյ Առաքելեան եւ Կարօ Ղազարեան, ինչպէս նաեւ Ռոզլին Մատոյեան, Գանա Յովհաննիսեան (Հայաստանի աւագ հիւպատոսութեան անունով) եւ գոնկրեսական Պրատ Շէրման:

Օրուան գիւաւոր բանախօսն էր Կարօ Փայլանի անձնակազմի նախկին ղեկավարուհի Թամար Նալճը: Ան Հրանդ Տինքի հարցով դատավարութեան գործընթացի մասին խօսելէ ետք եզրակացուց «... կ'ուզեմ հաւատալ որ պայքարը պիտի շարունակուի բոլոր անարդարութիւններու դէմ»:

Սրտաբաց գրոյցով հանդէս եկաւ «Ակօս» թերթի հայերէն բաժնի գլխաւոր խմբագիր, վիպասան եւ հեղինակ Բագրատ Էսթուքեան: Խօսելով Հրանդ Տինքի մասին, ան ի մէջ աչոյց ըսաւ. «...Հրանդ Տինքի խաղաղասէր, ամէն գնով կ'ուզէր որ երկխօսութիւնով իրար հասկնալ, լսել, տեսնել, սրտի ձայնն իմանալ: Ան երբեք թրքատեաց չեղաւ: Հրանդ՝ իր տարածած գաղափարներով, կասկածներու դուռ բացաւ եւ այդ սուղ արժեք իրեն ու թուրք ազգայնական անձի մը գոհը դարձաւ...: Հրանդ ժողովուրդներու բարեկամութեան ջահակիր էր եւ մեծ հաւատացող մը»:

Այս առթիւ՝ Բագրատ Էսթուքեան քանի մը գնահատագիրներու արժանացաւ, որոնցմէ կարեւորագոյնն էր «Հրանդ Տինքի Հոգիի Ազատութեան եւ Արդարութեան» տարեկան շքանշանը:

Երեկոյթի վերջին մասին տեղի ունեցաւ հարցազրոյց-քննարկում օրուան յայտագրի գլխաւոր խօսողներուն հետ:

\*\*\*\*\*

Պոլսոյ «Մարմարա» թերթէն կ'իմանանք թէ, 19 Յունուարին, Հրանդ Տինքի նուիրուած գլխաւոր ձեռնարկը տեղի ունեցած է «Ակօս» շաբաթաթերթի նախկին խմբագրատան առջեւ: Հարիւրաւոր անձեր պատասխաններ կրած էին «բոլորս հայ ենք, բոլորս Հրանդ ենք», «Պիտի չմոռնանք քեզ», «Անարդար տարի,

առանց Հրանդի», «Արդարութիւն կ'ուզենք», «Պիտի չի հրաժարինք պայքարէն», վերստուութիւններով: Հրանդ Տինքի մեծադիր նկարը կախուած էր նախկին խմբագրատան շէնքի ճակատին: Երթեւեկը ժամերով դադրած էր մերձակայ փողոցներուն վրայ:

Յիշատակի հանրահաւաքի մասնակիցները՝ միասնաբար լողունդներ հնչեցուցին ըսելով որ պիտի շարունակեն պայքարիլ Հրանդ Տինքի սպանութեան ներքին ծալքերը երեւան հանելու ուղղութեամբ: Ելոյթ ունեցողներէն Սէրթալ Էֆինճի դիտել տուաւ որ «Հրանդ Տինք կը խորհրդակնչէր եղբայրութիւնը, բան մը որուն այնքան պէտք ունի այս երկիրը»: Պոլսոյ բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան պաշտօնի ընթացքին եւ իր ծննդավայր Մալթիոյ մէջ յիշատակուեցաւ Հրանդ Տինքի անունը:

Ընտանիքն ու հարազատներն այցելեցին Հրանդ Տինքի գերեզմանը Պալքլի մէջ եւ ծաղկեպսակներ գետեղեցին:

## Գերմանիա

Պերլինի մէջ նախորդ տարիներու նման, այս տարի եւս միջոցառում մը տեղի ունեցաւ Մաքսիմ Կորբիի անունան թատերասրահին մէջ: Երեւանէն, վրաստանէն ու Թուրքիայէն արուեստագէտներ ելոյթներ ունեցան, ոգեկոչելու Հրանդ Տինքի յիշատակը: Այս առթիւ ելոյթներ ունեցան նաեւ Հրանդ Տինք հիմնարկի անձնակազմէն Չէյնեի Թաշքըն եւ Վահէ Թաշճեան:

## Գանատա

Գանատայի ձեռնարկը տեղի ունեցաւ Օթթաուայի մէջ, ուր Հաուրտ Էյզընսթատ բանախօսեց «Օսմանեան կայսրութեան մէջ ազգայնականութիւնը եւ արդի Թուրքիան» նիւթով: Նոյն օրը տեղի ունեցաւ նաեւ Կիւլսուն Օտապաշի ֆիլմին ցուցադրութիւնը եւ Կարօ Ալթընայի երաժշտական կատարումը:

## Անգլիա

Անգլիոյ մայրաքաղաք Լոնտոնի մէջ տեղի ունեցաւ Հրանդ Տինքի նուիրուած ոգեկոչման հանդիսութիւն մը «Հրանդ Տինքի յիշատակին ցաւը վիշտի կը վերափոխուի» կարգախօսով: Այս առթիւ որպէս հիւր մասնակցեցան Հրանդ Տինք Հիմնարկէն՝ Նայատ Գարաբէսէ ու Ռազմավարական Երկխօսութեան հիմնարկէն Հիւպերթա Վոն Վոսս Վիթթինկ:

## Սահմանադրական Փոփոխութիւններու Նախագիծը

Շարունակուած էջ 1-էն

Անդրադառնալով հարցին, թէ սուփրըվարչապետական համակարգէն ձեռքազատուելու խնդիր պիտի դրուի, ան պատասխանած է. «Կը նայենք, թէ ինչ է նշանակում սուփրըվարչապետական համակարգ: Տարբեր քաղաքական գործիչներ սուփրըվարչապետութեան հետ կապուած տարբեր կարիքներ են արտայայտել: Յանձնաժողովի մասնագիտական կարծիքը մենք կը լսենք եւ կը կիսուենք այդ կարծիքով», - ըսած է ան:

Բարասեանը նաեւ նշած է, որ փոփոխութիւններով կիսանախագահական համակարգին անդրադարձ չկայ: «Ես չեմ կարող ընդհանրապէս բացառել, բայց մենք

դատաիրաւական ռազմավարութեամբ նաեւ ահանջալուր լինելով հասարակութեանը, մենք ընտրել ենք այն հարցերը, որոնց կ'անդրադառնանք: Հիմա եթէ արտախորհրդարանական ընդդիմութեան կողմից կը լինի առաջարկ, մենք պատրաստ ենք քննարկել: Բայց ես փորձում եմ հիմա իմ կարծիքով կամ ընդհանուր կառավարութեան մօտեցումներով առաջնորդուել: Իսկ մօտեցումները ամբողջուած են դատաիրաւական ռազմավարութեան մէջ: Հենց յանձնաժողովով կ'որոշենք քաղաքական ուժերի հետ խորհրդակցութիւններին արդիւնքում նման քննարկում ունենալ, անպայման հասարակութեանը տեղեակ կը պահենք», - ըսած է նախարար Բաղասեան:



# Սերունդներու Ռահվիրան (Ընկեր Սարգիս Տիրունիի Նահատակութեան 91-Ամեակի Յիշատակին)

Ասկէ 91 տարի առաջ Սարգիս Տիրունի երբ Պէյրութի մէկ նեղլիկ գոիհի մը անկիւնը կը տապալէր արնաթաթախ, վստահաբար չէր գիտեր որ իր արեամբ լայնահուն ճանապարհ կը բանար գաղափարական յաջորդական սերունդներու համար:

Կարճատեւ բայց իմաստալից եղաւ անոր կեանքը. հազիւ ամբողջացուցած 30 տարիքը. առաջին սանդուխներուն՝ խոստումնալից գործունէութեան մը: Եկաւ ու գնաց ասուպի մը պէս, սակայն անոր շիրիմը դարձաւ ուխտատեղի, իսկ անոր ակօսած ազգային-գաղափարական ուղին՝ ճառագայթասփիւռ փարոս՝ իրարու յաջորդած հնչակեան փաղանգներու համար:



Անոր ազգային-հայրենասիրական շարունակութեան ղեկավարութիւնը լիովին Նակարարական համար, պէտք է իմանալ բախտորոշ այն հանգրուանները, որոնց բովանդակ անցաւ խօսքի եւ գրչի արի գործիչ Ս. Տիրունիին: Անոր ակունքները կու գային Կիլիկիոյ հայաբնակ ընդերքէն, պատմական ու հնաւանդ բնօրրանի յիշատակ ներքէն: Ապա՝ ցեղասպան ոտոխի եթաղանին ականատես, իր սիրեցեալ ժողովուրդին անուշ տանջանքներուն ականջալուր, գաղթի ու սովի, գրկանքի եւ հալածանքի ենթակայ բեկորներուն կարեկից՝ պիտի կոփէին անկոտորում մարդն ու կուսակցական գործիչը: Իր կամքով եւ պայքարունակ ոգիով հեզնեց յուսալքութենէն եւ բարո յազրկումէն ծնող խարխափումները: Եւ գալով ճիշդ ժամանակին՝ եղաւ զգօս եւ ներշնչող ուղեցոյցը թրահալած եւ ուղեկորոյս բազմութեանց:

Այս իրողութեանց վրայ աւելցաւ հայկական Կիլիկիոյ շուրջ նիւթուած թուրք-ֆրանսական խարդալանքը, որուն հետեւանքը ծանրօրէն կրեցին հայութեան վերապրած խլեակները: Գաղութատիրութիւնը աջակցումով ամբողջովին քողագերծած էր իր շահածարաւ դիմագծութիւնը: Ուրեմն, ի՞նչ կը մնար ընել, եթէ ոչ՝ անձնուրացօրէն նետուիլ պայքարի մարտադաշտ, ինքնավստահօրէն դիմակալել ցց ուող մարտահրաւէրները, ստանձնել յանձնառութեան դրօշը եւ ապա գայն կտակել գալիք սերունդներուն:

Այդ բոլորին համար քաղաքական-գաղափարական նախապատրաստութեամբ իր անհրաժեշտ: Պէտք է անցած ըլլալ գաղափարական դպրոցէ, ուր մարդ կը ներծծէ սէրն ու յարգանքը մարդկութեան եւ հայրենիքին հանդէպ, իր երակներէն կը հոսի ազգասիրութեան արիւնն ու կիրքը: Այդ միտքի եւ ոգիի դպրոցը Ս. Տիրունիի համար հանդիսացաւ Հնչակեան Կուսակցութիւնը, որուն միանալով, կարծէք գտած էր իրեն համար յարմարագոյն միջավայրը՝ իր ազգային-ազատագրական պայքարի վստակով, ընկերվարական դաւանանքով եւ ժողովրդավարական կառուցումով:

Ան ոչ միայն չարեցաւ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, ոչ միայն իւրացուց իր անկողնէն անոր, այլեւ՝ առատաձիր կերպով փոխեց հունտերը անոր հայրենասիրական միտքերուն, լուսատու Չահակի ինչպէս տարածեց շողերը լաւատեսութեան, հայրենիքի փթթումին, արդարութեան

յաղթանակին: Աւելին՝ ղեկավար դիրքերէ մեկնած՝ մամուլ, բեմ, դպրոց, երիտասարդութիւն դարձուց պարարտ ասպարէզները աշխատանքի եւ գորաշարժի: Խօսքէ աւելի գործով ցուցաբերեց պայքարելու արդիւնաւէտ ուղին:

Որպէս ընկերվարական, ազգայինի կողքին մարդկային արժէքները եւս ընկալեց ամենայն յանձնառութեամբ եւ այդպիսով արաբ ժողովուրդին ազատագրական պայքարը ֆրանսական գաղութարարներու դէմ գինք նետեց պայքարի նոր ոլորտ՝ քանզի այդ կը մղուէր յանուն արդարութեան եւ հաւասարութեան: Հետեւաբար, պատահական չէր որ ան նշաւակը դարձաւ ֆրանսական ուժերուն, որոնք գինք հալածեցին եւ աքսորեցին՝ մեկուսացնելով Արուսեան կղզեակի բերդին մէջ: Այնուհետեւ, ան մնալով անբաղձալի տարր մը եւ ան վեհեր գործիչ մը, շարունակեցին հալածել գինք մինչեւ Պէյրութ:

Եւ հուսկ, նենգօրէն, չարաշահելով ներհայկական հարցերը, դրդեցին եւ զգեսնել տուին եղբայրասպան գնդակներով 17 Յունուար 1929-ին: Ինկալ գաղափարի ուսուցիչը՝ իր վեհապանձ հասակով: Ինկալ անյողողող դաստիարակը՝ նոր շաւիղ բանալով: Ինկալ սերունդներու ռահվիրան՝ իր արեամբ ուղեգրով յետնորդներու գաղափարական ճամբան:

Ի՞նչեր ուսուցանեց գաղափարի ռահվիրան՝ իր կենդանութեան եւ յետ-մահու:

Հայրենասիրութիւն.- յուսակորոյս ժողովուրդին եւ յատկապէս երիտասարդութեան աչքերը սեւեռեց հայրենիքի ուղղութեամբ: Արարատի փէշերուն շուրջ ծուարիլը համարեց առաջնահերթութիւն: Հոն ընկերային արդարութեամբ հաստատուած վարչակարգ մը նկատեց հիմնական առաքելութիւն: Սա է՛ր նաեւ Հնչակեան Կուսակցութեան գոյութեան իմաստն իսկ: Եւ կը մնայ այդպիսին: Ժողովուրդն է տէրը իր հայրենիքին եւ անոր հարստութեանց: Մանաւանդ՝ աշխատող՝ բայց իրաւագործ, արարող՝ բայց կեղեքեալ ժողովուրդը:

Ընկերային արդարութիւն եւ ազգային հաւասարութիւն.- ո՛չ ազգայնամոլութիւնն է օգտակար եւ ո՛չ ազգամիջեան ատելութիւնը՝ շինարար:

Ընկերվարական մարդը պիտի տարբերի իր վեհանձնութեամբ, մարդը յարգելով, մարդկային նե-

# Կոչ-Յրաւեր Թերահաւատներուն



## ԱԻՏԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի ամանորեայ ուղերձը, կարելի է համարել փոխանցման շրջան մը, երբ իրաւամբ մարդիկ թերահաւատ էին երկրէն ներս ընթացող երեւոյթներու, խմորումներու եւ գործընթացներու նկատմամբ: Նորելուկ դէմքերը այդքան ալ ներշնչող չէին՝ նկատի առած անոնց տարիքը, փորձառութեան պակասը, ոչ հմտութիւնը: Վերջիվերջոյ պետական վարչամեքենան բարդ եւ զգալուն կառուց մըն է, ուր խակութիւնն ու անհաշուեկ կատ քայլերը կրնան ունենալ կործանարար հետեւանքներ: Շատերու տարակուսանքն ու վերապահութիւնները մեղադրելի չէին եւ կը մնար որդեգրել սպասողական դիրքորոշում մը՝ մինչեւ կտրուկ վճիռի մը կայացումը:

Բնականաբար, սկզբնական շրջանին եղան խարխափումներ, անյարիր նշանակումներ, անհետեւ թուլութեան մօտեցող յայտարարութիւններ: Իշխանութեան ծարաւի տարրեր չվարանեցան խոշորացուցի տակ առնելու մէջ մի դոյզն սայթաքում: Նախկիններ եղան խստադատ քննիչներ եւ ինքնակոչ իրաւարարներ՝ խօսելով արդարութենէն՝ բայց մոռնալով իրենց երէկի տխուր օրերն ու թողած ամօթալի ժառանգութիւնը: Նաեւ ծնունդ առաւ բազմութիւն մը նախանձոտներու, յոռետեսներու եւ չարախօսներու, որոնց նպատակը եղաւ միայն սեւեցնել ներկան, տարածել ժխտականութեան ոգին, հեզնել ամէն քայլ եւ չտեսնել դրական տեղաշարժ:

Սակայն կեանքը ընթացաւ բնականոն հունով: Օրացոյցին թերթիկները անցան պատմութեան, մինչ նորեր հետզհետէ կայացան՝ կատարուած իրականութիւն որպէս: Ի գարմանս թերահաւատներու եւ աղմկարարներու՝ ուշագրաւ է եւ գովելի երկրին բազմակողմանի յառաջընթացը: Մարդ ինչքան հակոյր կամ մաղձոտ պէտք է ըլլայ անգիտանալու համար այն բոլոր յաջողութիւնները, որոնք արձանագրուեցան վերջին շրջանին: Ռազմական եւ արտաքին քաղաքականութեան զգօս որոշումները յարգանք պարտադրող փաստեր են: Երեւանի մէջ կայացած միջազգային համագումարները յոյս տածող իրողութիւններ: «Զուարթնոց» օգակայանին աննախադէպ եռուզեռը, ըստ պաշտօնական վիճակագրութեանց, ողջունելի իրականութիւն: Մայրուղիներու շինարարութիւնը, որ երկրի մը արիւնատու երակներն են, դրական ու շօշափելի նուաճումներ: Հնամաշ մէջ:



### Դեսպան Բայբուրդեանը Քննարկեց Լոս Անճելոսում Հայ-Չինական Գործակցութիւնը Գլխաւոր Հիւպատոս Ժանգ Փինգի Հետ



Հայաստանի եւ Չինաստանի գլխաւոր հիւպատոսներ Արմէն Բայբուրդեան եւ Ժանգ Փինգ

Յունուարի 14-ին ՀՀ գլխաւոր հիւպատոս, դեսպան Արմէն Բայբուրդեանը հանդիպում ունեցաւ Լոս Անճելոսում Չինաստանի Ժողովրդական Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Ժանգ Փինգի հետ: Դեսպան Բայբուրդեանը ներկայացրեց 2019 թուականի ընթացքում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան իրականացրած նշանակալից միջոցառումները, այդ թւում՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի Գալիֆորնիա այցի հետ կապուած:

Դեսպան Բայբուրդեանը ընդգծեց երկու երկրների գլխաւոր հիւպատոսութիւնների համագործակցութեան կարեւորութիւնը գործարար, մշակութային, ակադեմիական համատեղ ծրագրերի իրականացման ճանապարհով:

Հայաստանի եւ Չինաստանի գլխաւոր հիւպատոսները քննարկեցին նաեւ Լոս Անճելոսում հայ-չինական գործարար համագործակցութեան հեռանկարները:

Կազմակերպման հեռանկարը՝ հայ եւ չինացի գործարարների մասնակցութեամբ:

Չինաստանի գլխաւոր հիւպատոս Ժանգ Փինգը, ողջունելով այս գաղափարը, առաջարկեց գործարար համագործակցութեան կազմակերպման գործում ներգրավել Լոս Անճելոսում Չինաստանի առեւտրի պալատին, որում ընդգրկուած են աւելի քան եօթ հարիւր չինական ընկերութիւններ: Նա նաեւ առաջարկեց ընդլայնել համագործակցութիւնը՝ իրականացնելով համատեղ մշակութային եւ կրթական նախագծեր:

Երկու կողմերն էլ շեշտեցին Հարաւային Գալիֆորնիայում Հայաստանի եւ Չինաստանի գործընկերութեան ձեւաւորման կարեւորութիւնը: Հանդիպմանը մասնակցեց ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական Վարազդատ Պահլաւունին:

### Մայտա Քիւրտեան-Քելէշեան՝ ԹՄՄ-ի Արեւմտեան Ափի Նորանշանակ Վարիչ Քարտուղարուհի

Մտերմիկ եւ ընկերային մթնոլորտի մէջ՝ Հինգաբլի, Յունուար 16-ի երեկոյեան, ԹՄՄ-ի Պէշկէթիւրեան կեդրոնէն ներս, ընդունելութիւն-հանդիպում տեղի ունեցաւ Թէքէեան Մշակութային Միութեան Կեդրոնական վարչութեան Արեւմտեան Ափի նոր վարիչ քարտուղարուհի՝ Մայտա Քիւրտեանի հետ: Ներկայ էին ԹՄՄ-ի երեք մասնաճիւղերու անդամներ, ՌԱԿ-ի եւ ՀԲԸՄ-ի եւ հայ համայնքէն շարք մը ներկայացուցիչներ, հիւրեր:

ԹՄՄ-ի Հիւսիսային Ամերիկայի եւ Քանադայի Կեդրոնական վարչութեան ատենապետ Երուանդ Ազատեանը եւ գործադիր տնօրէն Արամ Արքունը ներկաներուն ուղղեցին իրենց սրտի խօսքերը, եւ ապա ներկայացուցին Կեդրոնական վարչութեան նորանշանակ վարիչ քարտուղարուհի Մայտա Քիւրտեանը, որ հանդէս եկաւ շնորհակալական խօսքով եւ ներկաներուն ծանօթացուց անցած իր ուղին: Եղան պաշտօնական եւ թէ մտերմիկ այլ ելոյթներ եւս:

Տիկին Քիւրտեանը երկար տարիներու փորձառու միութեանական է: Ան Լիբանանէն տեղափոխուած է Լոս Անճելոս իր նոր պաշտօն վարելու համար: Նախապէս գրաւած է գանազան պաշտօններ Լիբանանի եւ Պոսթոնի տարբեր հայկական կազմակերպութիւններու մէջ՝ աշխուժացնելով անոնց գործունէութիւնը բազմատեսակ ձեռնարկ-



ԹՄՄ-ի վարիչ քարտուղարուհի՝ Մայտա Քիւրտեան Քելէշեան

ներով, որոնք պսակուած են տպաւորիչ եւ յաջող արդիւնքներով:

Նշանակուելով իր նոր պաշտօնին՝ ան մեծապէս ներգրաւուած պիտի ըլլայ մեր համայնքին մշակութային կեանքի վերաշխուժացման: Նաեւ, պիտի զբաղի գաղութային փոխմասնաճիւղային յարաբերութիւններով:

Թէքէեան Մշակութային Միութիւնը գործունէութեան յարգելի ժառանգութիւն մը ունի Լոս Անճելոսի մէջ: Այդ նոյն մշակութային դիմագիծով եւ յառաջապահ գաղափարներով, ան պիտի շարունակէ այս գաղութին մէջ իր տեղը գրաւել աւելի՝ աշխուժ թափով, եւ նոյն արժանաւորութեամբ:

### Համերաշխութեան Նախապայմանները

Շարունակուած էջ 1-էն

Նախկին պաշտօնեաներու պատասխանատուութեան չկանչուիմ, մոռացութեան մատուցիմ բոլոր տեսակի ապօրինութիւնները սկսած ընտրակեղծիքներէն մինչեւ բազմաթիւ սպանութիւններ: Մէկ խօսքով, պէտք է ձգել որ, կաշառակերները վայելեն իրենց կուտակած ահաւոր հարստութիւնը ու զայն օգտագործեն հակայեղափոխութիւն իրագործելու համար: Իսկ ժողովուրդի պահանջը իշխանութիւններէն այն է որ, պատասխանատուութեան ենթարկուիմ բոլոր յանցագործները ու վերադարձուիմ գողցուած միլիոնները:

Թաւշեայ յեղափոխութենէն ասդին, ոչ մէկ պետական պաշտօնեայ հանդէս եկած է նախկին իշխանութեան ներկայացուցիչներուն դէմ անձնական ատելութիւն պարունակող յայտարարութիւններով, բաւարարուելով միմիայն լուսարձակի տակ առնելով անոնց գործած մեղքերը՝ երկրի եւ ժողովուրդի հանդէպ: Իսկ ինչ կը վե-

րաբերի ընկերային ցանցերու վրայ երեսցող խիստ եւ վիրաւորական գրութիւններուն, անոնք հետեւեալն են Աշոտեաններու, Շարմազանովներու, Սիմասեաններու եւ այլոց ամբարտաւան կեցուածքին ու անպարկեշտ յայտարարութիւններուն:

Համերաշխութիւնը կարելոր է, սակայն հոն հասնելու համար կան նախապայմաններ: Քսան տարի պետութեան ինչքերն ու հողերը իւրացուցած, հասարակութեան դէմ հալածանք շղթայազերծած կուսակցութիւնը ու անոր ղեկավարները նախ պէտք է ընդունին իրենց գործած մեղքերը ու պատրաստակամութիւն յայտնեն ենթարկուելու պատիժի, վերադարձնեն իրենց կուտակած հարստութիւնը ու հրապարակաւ ներողութիւն խնդրեն ժողովուրդէն: Այս ու նման շարք մը քայլերով միայն, կարելի կը դառնայ նոր էջ բանալ ու առաջ երթալ հաշտութեան ու համերաշխութեան նոր մթնոլորտի մէջ:

«ՄԱՍԻՍ»

*Serata Romantica in*  
*Un'Atmosfera Italiana*

Կազմակերպութեամբ ՀՄՄ Տիկնաց Միութեան  
և  
Նոր Աերունդ Մշակութային Միութեան

**Ռոմանթիք Խնճոյի Իտալական Երեկոյ**

Տեղի կ'ունենայ Ուրբաթ 14 Փետրուար, 2020  
Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ  
Մուտքի նուէր՝ \$75

Տեղերը սպառուելու համար՝  
Հեռ. 626-485-6434, կամ 818-324-0574

Վայր՝ 1060 N. ALLEN AVE,  
PASADENA, CA 91104

*An unforgettable candlelight dinner*

NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

MEMBER

**Garine Depoyan**

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com



### Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը Հայաստանի եւ Արցախի 11,000-է Աւելի Երեխաներուն Կը Սփռէ Ս. Ծնունդի Երջանկութեան Խորհուրդը



Երկու օրեր՝ Յունուարի 14-ին եւ 15-ին մարդաշատ էր Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Հայաստանի Կեդրոնի Դահլիճը: Օրական չորս անգամ այդտեղ հաւաքուած մանուկներուն ու անոնց ծնողներուն համար Ամանորի եւ Սուրբ Ծննդեան միջոցառումները տեղի կ'ունենային: Ինչպէս միշտ, այս անգամ եւս այն կը տարբերէր նմանատիպ ձեռնարկներէն: Աստուծոյ սոսկ «Ձմեռ Պապ»ի այցելութիւն, ուրախ երգ ու պար եւ նուէրներ չէին: Դահլիճին մէջ հաւաքուած երեխաներուն ու անոնց ծնողներուն կը փոխանցուէր Ծննդեան խորհուրդը՝ Աստուծոյ սէրը միմիանց փոխանցելու եւ մարդոց անշահախնդիր ուրախութիւն պարգեւը զաղափարը:

Աւետարանչական Ընկերակցութեան «Հայասա» թատերախումբի բեմադրած «Երեք Չամբիւղ» ներկայացումին հիմքը ճիշդ այդ զաղափարն էր՝ Աստուծոյ սէրը, զոր պատանի դերասանները կարողացան յաջողութեամբ փոխանցել հանդիսատեսներուն: Թատերախումբի ղեկավար Նունէ Աբրահամեանի հեղինակած բեմադրութիւնը կը ներկայացնէր Ամանորի նախօրեակին իրենց նուիրական երազանքներու մասին պատմող դպրոցականներ, որոնք կրցան հասկնալ որ նոյնիսկ շօշափելի երազանքները կրնան իրականութիւն դառնալ, Երբ անոնց հասնե-

լու ճանապարհին կայ մեծ ցանկութիւն՝ ուրիշներու օգնելու պատրաստակամութիւն եւ անսահման կարեկցութիւն: Ներկայացումի վերջաւորութեան դերասանները ողջագուրեցին իրար եւ հնչեց Սուրբ Գրային կարեւոր պատգամներէն մէկը՝ ուր Յիսուս ըսաւ. «Ես եկայ, որ կեանք ունենան, եւ ճոխութեամբ ունենան»: (Յովհ. 10. 10)

Իւրաքանչիւր ներկայացումէ առաջ իրենց բարեմաղթանքները փոխանցեցին ներկաներուն Վեր. Աւետիք Խաչատրեան՝ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժնի Տնօրէն եւ Յարութ Ներսէսեան՝ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան ներկայացուցիչը Հայաստանի մէջ:

Անուհետեւ, որբերը «անբաժան մասը - [կը դառնան] Հաճնի ընկերամշակութային կեանքին: Անոնց կողմէ խմբովին հնչեցուած ազգային երգերը ... կատարած տողանքներն ու ներկայացուած թատերգութիւնները նոր փայլք [կու տան] Հաճնի մէջ վերստին ծայր առած հայկական կեանքին»: Աւելի ետք, որբերու չափահասները «արիաբար» կը մասնակցին ինքնապաշտպանութեան կռիւին, եւ մեծ ծառայութիւն կը մատուցեն իբրեւ սուրհանդակ կամ պարէն եւ ռազմամթերք փոխադրողներ, որբանոցի ուսուցիչներէն Գէորգ Պաղտոյեան կը մարզէ չափահաս որբերը, կը սորվեցնէ դրօշակի գաղտնալեզու: Յիրաւի, Հաճնի ՀԲԸՄ-ի այս որբանոցն ու հիւանդանոց-դեղարանը «կը լրացնեն խիստ հական պակասներ»:

29 Յունուար 1920-ին կը կատարուի Հաճնոյ աւանդական ջրօրհանէքը, Մարտին կը խմբագրուի Նոր Հաճն թերթի առաջին թիւը, բայց թայարտա չ'արտօներ անոր տպագրումը: ՀԲԸՄ որբանոցը կը գործէ իր ուժերուն համարժէք. ոչ մէկ մահացութեան պարագայ կ'արձանագրուի հոն մինչեւ 15 Մարտ 1920, իսկ եօթ թիւերու ընթացքին Հաճնի մէջ կ'արձանագրուին աւելի քան 100 ամուսնութիւն եւ 200-է աւելի ծնունդ: Սակայն, ի տես զարգացող վտանգաւոր կացութեան եւ շեշտուող անորոշութեան Հաճնէն բարձրաստիճան պատուիրակութիւն մը (Սարաճեան Եպս., Պատ. Խաչատուրեան, Շմաւոն Փոստոյեան եւ թիկնապահներ) 22 Փետրուարին կ'ուղղուի Սիս ու Ատանա՝ բարձրաձայնելու Հաճնի կարիքները եւ ճշտելու հետագայ քայլերը: Կարճ ժամանակ ետք, Մարտի աղէտը բաւական բան կը յստակացնէ. ծաւալելու եւ առաւել աճելու ՀԲԸՄ-ի ծրագրերը կը կասեցուին աղէտին, Կիլիկիոյ անապահովութեան եւ



# Հաճնոյ Հերոսամարտը - 100-Ամեակ

«պաշարման վիճակին հետեւանքով, Հաճընի որբանոցին մասին նորագոյն տեղեկութիւն ունենալ կարելի եղած» չըլլալուն պատճառով:

## Հաճընի Պաշարումը եւ Ութամետայ Հերոսամարտը

Յիրաւի, վերադարձի, տեղաւորումի, վերաշինութեան եւ խաղաղ կեանքի վերսկսումի դժուարին միամետայ շրջանը (Մարտ 1919-Մարտ 1920) կը կասի Մարաշի աղէտին լուրով: Մարտ 1920-ին Հաճըն կ'անցնի գինուորական կարգապահութեան: Շատոնց արդէն, էրզրումի մէջ, 23 Յուլիս 1919-ի ժողովին, Քեմալի ազգայնական շարժումը ոչնչացնող որոշում առերէր փոքրամասնութիւններուն եւ տասանորդուած հայութեան դէմ:

3 Մարտ 1920-ին քաղաքը կը վերածուի դժուարանցանքի տարածքի, կ'ընդհատի երթեւեկը Սիւսի հետ, 15 Մարտին հեռագրաթէլերը կը խզուին: Կը կազմուին Հաճընի Ինքնապաշտպանութեան Բարձրագոյն ժողովը եւ վերին Հրամանատարութիւնը: Վերջինիս կեդրոնական Ս. Աստուածածին եկեղեցին եւ կից Ս. Մեսրոպեան վարժարանին մէջ, ուր կը ծածանի ֆրանսական դրօշակը: Վարժարանի վարի յարկի նախկին թատերասրահը կը փոխադրուին ՀԲԸՄ հիւանդանոց-դեղարանը: 8 Մարտին կը կատարուի գինուորական տողանցք: Ինքնապաշտպանութեան կոմիտէն Հաճընը կը բաժնէ լեռնային 4 գլխաւոր դիրքերու.- ա) Տոլամաճ/Իժ (Քիրազ) Օլուք (հիւսիս-արեւելեան), Ա. վաշտ, բ) Տոնուզ-Սեքի (հիւսիս-արեւմտեան), Գ. վաշտ, գ) Ղորչուղազ/Չալըր Պեյն/Կէօնիկ (հարաւ-արեւելեան), Գ. վաշտ դ) Չալղան (հարաւ-արեւմտեան), Դ. վաշտ: Կը կազմուին պարենատարման եւ գրաման յանձնարումները, կը հաստատուի կրակմարի դրութիւն: Քաղաքի բնակչութիւնը կը բաժնուի երեք խումբի.- ա) երիտասարդութիւնը՝ 16-50 տարեկան տղամարդիկ (շուրջ 600 հոգի), զօրակոչի կ'ենթարկուին եւ կը լծուին ինքնապաշտպանութեան, կը կազմուին յառաջապահ եւ պահեստի խումբեր, բ) երկրորդ խումբը՝ 8-12 տարեկան փոքրեր, գինամթերք փոխադրողներն եւ սուրհանդակներն էին, գ) երրորդ խումբը երէցներն էին, որոնք խրամներ կը փորէին եւ յարձակումներու ատեն «հուռա», հոռա» կը պոռային, իրենց կ'ընկերանային նաեւ գէնք չունեցող պատանիներ: Իգական սեռը կը բաժնուի չորս խումբի.- ա) դիրքերուն վրայ մարտնչողներ, բ) դեռատի հարսեր եւ օրիորդներ, որոնք կ'ընկնէին շուրջ զմաստակարէին դիրքերուն, գ) երրորդ խումբը հիւանդանոցին կը ծառայէր, դ) չորրորդ խումբը երէցներն էին, որոնք արցունքոտ աղօթքներով հաց կը թխէին:

3 Մարտ 1920-ին քաղաքը կը վերածուի դժուարանցանքի տարածքի, կ'ընդհատի երթեւեկը Սիւսի հետ, 15 Մարտին հեռագրաթէլերը կը խզուին: Կը կազմուին Հաճընի Ինքնապաշտպանութեան Բարձրագոյն ժողովը եւ վերին Հրամանատարութիւնը: Վերջինիս կեդրոնական Ս. Աստուածածին եկեղեցին եւ կից Ս. Մեսրոպեան վարժարանին մէջ, ուր կը ծածանի ֆրանսական դրօշակը: Վարժարանի վարի յարկի նախկին թատերասրահը կը փոխադրուին ՀԲԸՄ հիւանդանոց-դեղարանը: 8 Մարտին կը կատարուի գինուորական տողանցք: Ինքնապաշտպանութեան կոմիտէն Հաճընը կը բաժնէ լեռնային 4 գլխաւոր դիրքերու.- ա) Տոլամաճ/Իժ (Քիրազ) Օլուք (հիւսիս-արեւելեան), Ա. վաշտ, բ) Տոնուզ-Սեքի (հիւսիս-արեւմտեան), Գ. վաշտ, գ) Ղորչուղազ/Չալըր Պեյն/Կէօնիկ (հարաւ-արեւելեան), Գ. վաշտ դ) Չալղան (հարաւ-արեւմտեան), Դ. վաշտ: Կը կազմուին պարենատարման եւ գրաման յանձնարումները, կը հաստատուի կրակմարի դրութիւն: Քաղաքի բնակչութիւնը կը բաժնուի երեք խումբի.- ա) երիտասարդութիւնը՝ 16-50 տարեկան տղամարդիկ (շուրջ 600 հոգի), զօրակոչի կ'ենթարկուին եւ կը լծուին ինքնապաշտպանութեան, կը կազմուին յառաջապահ եւ պահեստի խումբեր, բ) երկրորդ խումբը՝ 8-12 տարեկան փոքրեր, գինամթերք փոխադրողներն եւ սուրհանդակներն էին, գ) երրորդ խումբը երէցներն էին, որոնք խրամներ կը փորէին եւ յարձակումներու ատեն «հուռա», հոռա» կը պոռային, իրենց կ'ընկերանային նաեւ գէնք չունեցող պատանիներ: Իգական սեռը կը բաժնուի չորս խումբի.- ա) դիրքերուն վրայ մարտնչողներ, բ) դեռատի հարսեր եւ օրիորդներ, որոնք կ'ընկնէին շուրջ զմաստակարէին դիրքերուն, գ) երրորդ խումբը հիւանդանոցին կը ծառայէր, դ) չորրորդ խումբը երէցներն էին, որոնք արցունքոտ աղօթքներով հաց կը թխէին:

Հրամանատարական կեդրոնատեղիին խուցերէն մին կը վերածուի դերձակատան, ուրիշ մը՝ գինարանի, ուր կը նորոգուէին գէնքերը, չպայթած ռումբերուն նիւթերը կ'օգտագործուէին եւ օրական 5-600 փամփուշտ կը պատրաստուէր: Կը պատրաստուէր նաեւ վառօդ: Զինարանի մարդիկ՝ գլխաւորութեամբ ՀԲԸՄ որբանոցի ուսուցիչ խորբերդի քիմագէտ Գէորգ Պաղտոսեանի, Համբարձում Ապտեանի եւ Տիգրան Աճէմեանի, թնդանօթ շինելու անյաջող փորձ


մը կը կատարեն, բայց կը յաջողին ականներ ու պայթուցիկներ սարքել (Թերզեան, էջ 301-3):

16 Մարտին Հաճնոյ երկնակամարին կ'երեւի ֆրանսական առաջին սաւառնակը, իսկ յաջորդ օրը թուրքեր վերջնագիր կու տան Հաճընի: Ֆրանսական երկրորդ սաւառնակը Հաճնոյ երկնակամարին կ'երեւի 28 Մարտին, որուն կը յաջորդեն ծանր մարտերը: 6-7 Ապրիլին ծանր յարձակումի կ'ենթարկուի Հաճընը, որուն հետեւանքով կը լքուին լեռնային դիրքերը: Ամերիկեան որբանոցին շրջանը՝ Քրտէտ եւ շրջակայքը, կ'անցնին թրքական հակազուրի տակ: Չափահաս 20-40 որբանոցայիններ, իրենց ուսուցիչ Գէորգ (Չաուշ) Պաղտոսեանի հրամանատարութեամբ ամիս մը պաշտպանուելէ ետք, Քիրազ լեռան վրայ գետեղուած թնդանօթին ու մթակոծումներուն եւ զօրքի յարձակումներուն դիմաց Ապրիլի կէսերուն կը լքեն լեռնային դիրքերէն վերջինը՝ Ս. Յակոբայ վանքը, ՀԲԸՄ-ի իրենց որբանոցը ու կ'անցնին քաղաքամէջ, մինչ կրտսեր որբանոցայինները արդէն հեռացուած էին անկէ:

Դիմադրականները կը խրամատարուին քաղաքի մերձակայ դիրքերուն: Ղանլը Փազարի հրամանատար կ'անուանուի կամաւոր վահան Ալթունեան, Կելիկի՝ Արշակ Սահակեան, Քոփուշ թաղի՝ Կարապետ Օղլուգեան, Եազը թաղի՝ Միլիտի (Միլ) Մանասեան, Ս. Յակոբայ կամուրջի՝ Կիրակոս Տէր Կիրակոսեան, Մանսխանէի՝ Մեսրոպ Շիրտըմեան: Պաշարման շղթան հազիւ 20 քայլ հեռու էր հայկական կարգ մը դիրքերէն:

15 Ապրիլին՝ թուրքեր հաշտութեան առաջարկ կը ներկայացունեն, իսկ 30 Ապրիլին ծանր կը ու մթակոծուի Կելիկ թաղը: 8 Մայիսին հաճընցիք կը կազմակերպեն առաջին հակայարձակումը՝ 300 դիմադրականներով: Թուրքերը նոր թարմ ուժեր բերելով 10 Մայիսին մեծ թնդանօթով (105 մ) կը սկսին աւերել արդէն իսկ աւերակուած Հաճընը: Սակայն Մայիսի աւարտին թուրքերու 16 ծանր յարձակումները ապարդիւն կ'անցնին:

25 Մայիսին Սիսէն Հաճըն հասած լրաբեր Ասատուր Սաչեան, Սիս վերադարձին ականատես կ'ըլլայ քաղաքի հայութեան պարպումին: 1 Յունիսին կը ջարդուի Վահագի հայութիւնը: 8-9 Յունիսին դիմադրականները մասնակի յարձակողականով կը գրաւեն Քրտէտի որբանոցը, եւ որբանոցայիններն ու տեղի ուտեստի պաշարը կը փոխադրեն Հաճըն: 18 Յունիսին ձեպէճեան կը վիրաւորուի եւ այնուհետեւ կը գամուի անկողին: Յուլիս 1920-ի սկիզբները միլի չեթէական խումբեր կը սկսին երեւիլ Հաճընի լեռները, մինչ 3 Յուլիսին ինկած էր Շարը: Ասոր կը յաջորդէ Հաճընի վրայ ամէնաբուռն յարձակումը որ կը ձախողի: Յուլիսի վերջաւորութեան անհամերաշխութիւնը կը շեշտուի Հաճնոյ քաղաքական եւ գինուորական հրամանատարութեանց միջեւ: Չալեան իգուր կը ջանայ տարհանող գինուորական հրամանատարութիւնը՝ Հաճընի բնակչութիւնը տեղափոխելու Ատանա: 5-6 Օգոստոսին տեղի կ'ունենայ դիմադրականներու երրորդ հակայարձակողականը: 20 Օգոստոսին Հաճըն կը հասնին 3 սուրհանդակներ որոնք կ'աւետեն շուրջ 1500 կամաւորներու Ախարձայի (Ատանայի մօտ)



մէջ հաւաքուիլը՝ Հաճընի օգնութեան հասնելու: Օգոստոսի երրորդ տասնօրեակին Չալեան դարձեալ կ'առաջարկէ նահանջել Ատանա, մինչ գինուորական թեւը կը հակառակի: 18 Սեպտեմբերի գիշերը՝ դիմադրականներու չորրորդ կահայարձակողականը՝ Ռուժու եւ Կիւզելլիմ գիւղերուն վրայ, դարձեալ կ'արդիւնաւորուի ուտեստի պաշարի ապահովմով, որ նոյնպէս կը սպառուի: Ճիշտ է, որ պաշարուածները ջուրի տագնապ չունէին, բայց Յուլիսին արդէն մորթուած էին Հաճընի բոլոր կենդանիները. գրաստներ, ձիեր-էշեր-ջորիներ, շուն ու կատուներ, նոյնիսկ հիւանդներուն կաթ հայթայթելու վերապահուած միջանի կովերը...:

մասնութիւն մը կը հասնի ձիհան: Ասոնք վերապրողներն են հերոսական Հաճընի:

Պապենական Հաճընի յիշատակը վառ պահելու մտասեւեռումով, վերապրող հաճընցիներ եւ անոնք, որոնք գինադարարին չէին վերադարձած ծննդավայր, 1928-ին Մարտի մէջ կը հիմնեն Հաճըն պարբերաթերթը, 1931-ին՝ Պէյրուլի հիւսիսային մուտքին Նոր Հաճըն բնակավայրը, Երեւանի կից Նուպարաշէնի մէջ Նոր Հաճըն թաղամասը, իսկ Նոյեմբեր 1958-ին հայրենի պետութիւնը Նոր Հաճըն կը վերանուանէ Արգնի Գէսի թիւ 3 տեղամասը:


Հաճընի նահատակութեան յիշատակը վառ կը պահուի նաեւ այսօր, Հաճըն ծնած եւ այնուհետեւ նորահաս յետնորդներուն կողմէ՝ ամէնամեայ մատաղով, որ կը կատարուի Հաճնոյ Հայրենակցական Միութեան զանազան մասնաճիւղերու ջանքերով, Հայրենի Նոր Հաճընի մէջ կանգնեցուած յուշարձան թանգարանով եւ այնտեղ կատարուող ճիտապաւր-մատաղով:

Վերապրող հաճընցիք մեզի՝ յետնորդներուս ոգեկան թելադրանք մը ունեցան եւ կը շարունակեն ունենալ.- Սիրուն Հաճընը իր պատմութեամբ եւ ութամետայ հերոսամարտով անջնջելի թեպէտկ (աւանդ) մըն է: Աղայլօ (յուժպէտս) պէտք չէ՝ երթայ:

## Հաճընէն Փախուստը եւ Կոտորածը. Վերապրողներ, Սգահանդեսներ, Վերաշինութիւն

15 Հոկտեմբեր 1920-ին կը լքուի Հաճընը: Յաջորդող օրերուն կը կատարուի անգէն զանգուածին ջարդը, լեռներու վրայ փախստականներու հայրսութիւնը: Կը ջարդուին նաեւ ՀԲԸՄ-ի Հաճընի որբանոցայինները (ըստ ականատեսի վկայութեան, թուրքերը «բոլոր որբերը ... բերդէն վար կրակին մէջ նետեցին»), հիւանդանոցին պաշտօնէտները:

Պաշարման օղակը ճեղքած շուրջ 400 դիմադրողներու մեծա-





**St. Gregory Armenian Apostolic Church Men's Forum**  
(Ladies & Families Always Welcome)

Thursday, January 30 – 6:30 P.M.


**“SPECIAL ARMENIAN DIASPORA EVENT”**

LIFETIME ACHIEVEMENT AWARD BEING PRESENTED TO:

**MR. KENNETH KHACHIGIAN**

**NAMED: 100 ARMENIANS WHO CHANGED THE WORLD**



- \* President Reagan's Chief Speech Writer, Senior Political Adviser and Special Consultant
- \* Served in The White House for Three U.S. Presidents
- \* Adviser to Nine Presidential Campaigns
- \* Instrumental in Guiding **George Deukmejian** to Victory As Governor of the State of California.


\*Like the Genocide of the Armenians before it, and the Genocide of the Cambodians which followed it — and like too many other such persecutions of too many other peoples — the lessons of the Holocaust must never be forgotten. President Ronald Reagan, April 22, 1981

At St. Gregory the Illuminator Church “Geragos Hall” 2215 E. Colorado Blvd., Pasadena  
RSVP'S Are A **Must** As Dinner Will Be Served Church Donation \$20

Hilda Gourdikian: 626-695-9899, Ardash Gourdikian: 626-399-1914, Church Off. : 626-449-1523  
Sponsor A Dinner in Memory of a Loved One, a Birthday, an Anniversary, in Recognition of a Friend or Family Member, a Graduation & for any Other Event. Please Contact Hilda Gourdikian above.



# Հայկական Տաղասացութիւն 1100-1722 Դ. մաս



## ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒԹԵԱՆ

Հայկական տաղասացութեան նուիրուած յօդուածաշարս իր աւարտին կը հասնի: Այսօր, վերջին անգամ պիտի գբօսնուենք տոհմիկ ստեղծագործութիւններու բուրումնաւէտ պարտէզին մէջ, ընտիր ծաղկաբաղ մը պիտի կատարենք ու պիտի վայելենք միջնադարեան հեշտալուր մեղեդիներ:

Յարգելի ընթերցող, հայկական գրականութիւնը ունի 1600 տարուայ գրաւոր պատմութիւն, որուն 14 դարը հին եւ միջնադարեան շրջան է, երբ Հայաստան երկիրը գոյուելիս չունէր որպէս քաղաքական միաւոր, ազգի ճակատագիրը ենթակայ էր օտար տիրողներու պատահական կամքին: Ալեկոծեալ, անհաստատ, արիւնալի ալդ ժամանակներուն, ազգի ստեղծագործ միտքը, գրական արտադրութիւնը երբեք կանգ չառաւ: Ընդհակառակը, Հայկական լեռնաշխարհի մէջ ծնունդ առին համաշխարհային արժէք ներկայացնող դէմքեր, գրական ինքնատիպ եւ հետաքրքրական էջեր: Այն ժամանակ, հայու ազատատենչ եւ քրիստոնէական հաւատքով ստորուած ոգին իր կենսունակութիւնը պահեց տաղերու մէջ:

Տաղը, բանաստեղծական եւ երաժշտական արուեստներու համադրութիւնն է: Ի տարբերութիւն «անանուն» ժողովրդական երգի կամ բանահիւսութեան, տաղը հեղինակային է: Ան ստեղծուեցաւ զարգացող քաղաքային միջավայրի մէջ, առնչութիւն ունի քաղաքաբնակ հայու կենցաղի եւ ընկերային յարաբերութիւններու հետ: Տաղասացը արհեստավարժ բանաստեղծ է, երաժիշտ եւ կատարող, տաղերգութիւնը կը համարէ իր հիմնական արհեստը, ինչպէս Յովհաննէս Թլկուրանցին ըսեր է. «Այդ է քո գործ գորհանապագ»: Տաղը լայն ժողովրդականութիւն վայելեց, հնչեց հասարակական հաւաքոյթներու, խնճոյքներու եւ սոնակատարութիւններու ժամանակ: Իսկ այժմ, չիչենք չորս ինքնատիպ դէմքեր, որոնք կենսասէր եւ հայրենասէր երգերով ճոխացուցին հայկական գրականութիւնը:

Նահապետ Քուչակը վանեցի է, ծննդեան տարին՝ անյայտ: Մահացեր է 1512 թուականին, թաղ-

ուեր է Խառակոնիս գիւղի Ս. Թէոդորոս եկեղեցու առջեւ: Մինչեւ 20րդ դարու սկիզբը իր տապանաքարը ուխտատեղի է եղած: Քուչակը հեղինակած է «հայրեն»ներ՝ չորս տողանոց բանաստեղծութիւններ: Ուրոյն է հայրենի կառուցը, իւրաքանչիւր տող ունի 15 վանկ, 7+8 վանկ սկզբունքով երկու կիսատողեր: Ահա քուչակեան նմուշ մը. «Եկո՛, քեզի նուռ մի տամ...», 7 վանկ, «...կըտրէ՛, տե՛ս, քանի՞ հատ ունի», 8 վանկ:

Քուչակի հայրենները սիրահար գոյգի ջերմ գրոյցներ են: Պարզ ու գողտրիկ է հետեւեալը. (Տղան) «Եկո՛, քեզի նուռ մի տամ, կտրէ, տե՛ս, քանի՞ հատ ունի: Ամէն հատի պագ (համբոյր) մի տուր, աւելին հարամ թէ պիտի»: (Աղջիկը) Գնա՛՛ ծօ, տղայ տխմար, ես գբեզ խելօք կու գիտի, ամէն հատին պագ մի տամ, ո՞ր եղեր, կամ ո՞ւր



տի (պիտի) լինի»: Քուչակը կը սիրէ անկաշկանդ ու համարձակ գովաբանութիւններ հիւսել իր եարին համար, ուր կայ փոխադարձ, ազնիւ սէր, ու չենք տեսներ գուհիկ մարմնապաշտութիւն. «Թուխ աչք եւ ունքեր ունիս, լայն ճակատ ու կարմիր երես. / Այդ ճերմակը որ դուն ունիս, գշամամ ծծերդ որ ի ներս, / Մեռնիս, այլ անդին երթաս, գայդ ճերմակ ծոցիկդ ի՞նչ անես, / Զամէնն որդեթրն ուտեն, - դու է՞ր գիս մահրում կու պահես»: Քառեակի մէջ լսելի է վաղահաս մահուան սարսափը, երկրային կեանքը լիովին վայելելու անմիջական փափաքը՝ երբ դեռ գարուն



է, ծիլ ու ծաղիկ: Բնութեան պատկերներու համեմատութիւններով Քուչակը կը փառաբանէ իր սիրածը. «Աչերդ է ծովէն առած, եւ ուներդ է ի թուխ ամպէն. / Այդ քո պատկերքդ սուրաթդ ի վարդին կարմիր տերեւէն. / Ուր որ դու կանգնած լինիս, չէ պատեհ վառեն մոմեղէն. / Ծոցուդ լոյսն դուրս ծագէ, գէմ ելնէ մեռելն ի հողէն»: Ըստ Քուչակի, կեանքը արժէք չունի առանց չքնաղ եարի. «Ես աչք ու դու լոյս, հոգի, առանց լոյս՝ աչքն իսաւարի. / Ես ձուկ ու դու ջուր, հոգի, առանց ջուր՝ ձուկն մեռանի. / Երբ գձուկն ի ջրէն հանեն՝ է (եւ) ի այլ ջուր ձգեն, նայ ապրի, / Երբ գիս ի քենէ գատեն, քան



բանաստեղծ, երաժիշտ, գիտնական եւ հրատարակիչ, ազգային եւ կրթական լուսաւորութեան ռահվիրաներէն Պաղտասար Դպիրիբ (1683-1768): Անոր ամենայայտնի ստեղծագործութիւնն է «Ի ննջմանէդ արքայական» այլաբանական տաղը. «Ի ննջմանէդ արքայական, գարթիր, նագելի իմ, գարթիր: / Էհաս նշոյն արեգական, գարթիր, նագելի իմ, գարթիր: / Պատկեր սիրուն, տիպ բոլորակ, լրացելոյ լուսնոյն քատակ, / Ոչ գտանի քեզ օրինակ, գարթիր, նագելի իմ, գարթիր»: Սիրային բանաստեղծութեան մը տպաւորութիւնը ձգող այս կտորի մէջ պատկերուած սիրունատես նագելին Մայր Հայաստանն է, որ գրկուած է իր մարտական ոչտերէն ու մնացեր է արքայական քունի մէջ: Իսկ այժմ, պէտք է, որ արթննայ, որովհետեւ հասած է արեգակի նշոյլը, եկած է ազգային արթնութեան ժամանակը:

Պետրոս Ղափանցին վերանորոգող հայկական դասական բանաստեղծութեան ներկայացուցիչներէն է: Էջմիածնի միաբան էր: Ուղարկուեցաւ նախ Ռուսիոյ, ապա՝ Ղրիմ, Պոլիս, Արմաշ, Ադրիանապոլիս, որպէս վերատեսուչ, իսկ ծեր հասակին՝ Նիկոմիդիա, որպէս թեմի առաջնորդ, ուր մահացաւ 1784ին: Երգահան էր Ղափանցին: Անոր ամենայայտնի ստեղծագործութիւններէն մէկն է «Առաւօտեան քաղցր» տաղը. «Առաւօտեան քաղցր եւ անոյշ հովերն, / Մերձեալ հնչեն մեղմով թփոցդ քովերն, / Արդ, ծածանին աչացս լցեալ ծովերն. / Բացիր, բացիր, իմ կարմիր վարդ աննման»: Ինչպէս Պաղտասար դպիրի երգը, այս մէկն ալ կարելի է ըմբռնել, որպէս այլաբանական գործ: (Ղափանցին աշակերտած է Պաղտասար դպիրին) «Կարմիր վարդ»ը Մայր Հայաստանն է, զեղատեսիլ եւ աննման: Իսկ, «...Դարձեալ առ ազգն իւր սիրելի» խորագրեալ տաղի մէջ Ղափանցին կը մաղթէ, որ Հայաստանը մեծարանքի արժանանայ եւ փայլի բոլոր այլ պետու-

զմեռներն այլ ճար չի լինի»: Յատկանշական են Քուչակի «եռանկիւնաձեւ» երկիւստութիւնները, ուր առանձնացած գոյգը կը զգայ երրորդի մը կասկածելի ներկայութիւնը: Ահա օրինակ մը. «Առաւօթ, դու յետ կեցիր, որ գմեր խաղն չաւիրես. / Գաս, զլոյսն ի վրայ բերես ու գիս իմ եարէս բաժանես»: Փոխաբերութիւն է «առաւօթ»ը, ան բամբասող բերան է կամ՝ չար աչք, զաղտնատես, զաղտնալուր, որ կ'ուզէ սէրը խոչընդոտել: Ուշ-միջնադարուն մէկ նիւթ դեռ կը մնար այլաբանական-ազգային ազատագրական միտքը: Այդ օրերուն յայտնուեցաւ պոլսահայ



### Փտածութեան Քաղաքակրթութիւն

«Ճանչնալ այն ամէնը, որ սխալ գործեր ես՝ ըլլայ այդ սովորական կեանքի մէջ, ընտանիքի թէ բարեկամներու. ճանաչու՛մք ուժ է»:  
ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ  
Հայաստանի Հանրապետութեան նախագահ

#### ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Փտածութեան հայերէն հոմանիշները կամ բացատրութիւնները կուզան որպէս «նեխածութիւն», բայց նաեւ իբրեւ «անբարոյականութիւն»: Այս իմաստով՝ փտածութիւնը, պատմութեան ընթացքին եւ մինչեւ մեր օրերը, ստացած է ու տակաւին կը ստանայ տարբեր բովանդակութիւններ:

Եթէ անիկա մէկ կողմէ առնչուած է ղեկավարի կամ պետական կառույցի անբարոյական կարգավիճակներուն, ուր անոնց ստացած հեղինակութիւնը կը գործածուի ապօրինի ձեւով հարստութիւն դիզելու, կեղեքելու եւ օրինական կերպով իրենց տնօրինած լիազօրութիւնները գործածելու՝ սանձարձակ կերպով եւ յօգուտ իրենց:

Փտածութիւնը կ'ընդգրկէ նաեւ քաղաքական պիտակ, բայցեւա՛յնպէս ան կը հարուածէ կրթական, աշխատատեղի ու բանուորական տարբեր կառույցները, ինչպէս նաեւ այլ մարզեր, հասնելով մինչեւ ընկերային ու կրօնական մարզերուն:

Կրօնական փտածութիւնը՝ իմաստաբարոյականութիւնը, պատմութեան ընթացքին, իր տարբեր երեւոյթներուն ընդմէջէն, նաեւ ճամբայ հարթած է եկեղեցական բաժանումներու պարագային:

Այս դիտանկիւնէն մեկնելով կրնանք հաստատել, թէ փտածութիւնը իրական է եւ ան իր մէջ միայն նիւթական-տնտեսական կեղեքում չի բովանդակեր: Անոր մէջ կ'իջնայ նաեւ բարոյական ու ընկերային իրաւունքներու անտեսում, մարդկային արժէքներու ոտնակոխում, ցեղապաշտական ու ընկերային դասակարգային խտրականութիւն եւ բաժանում: Փտածութիւնը, որ սկսած է մարդկային պատմութեան սկիզբէն մինչեւ օրս տակաւին կը շարունակուի:

Արագ ակնարկ մը նետելով ներկայ աշխարհին կարելի է տեսնել, թէ ինչքան թոհոփոհ կայ ամենուրեք, եւ ամէն տեղ կը հնչեն մարդկային կեանքի բարուք արդարութիւն եւ առողջ կենսամակարդակ հաստատող պահանջներ:

Համաշխարհային հարթակի վրայ 2019-ի իրադարձութիւնները լաւ ցուցանիշներ են այս բոլորին: Հարակալին Ամերիկայէն սկսեալ մինչեւ Եւրոպա ու Ասիա, ինչպէս նաեւ Միջին Արեւելք, ու վերջապէս՝ Լիբանան: Այս վերջինը դարձաւ մէկ ապրող վկայութիւն մը, ուր ժողովրդային ընդվզումը փտածութեան դէմ չի բացառեր ոչ մէկ ղեկավար: «Բոլորը՝ այսինքն բոլորը» կարգախօսը վերածուեցաւ փտածութեան դէմ ըմբոստութեան մեծ ալիքի:

Բայց յատկանշականը այն էր, որ լիբանանեան ձայնասփիւռի կայանի մը երիտասարդ խօսնակը տիրող կացութեան մասին կ'արտայայտուէր ըսելով, որ երկրին ընդհանուր քաղաքակրթութիւնը «Փտածութեան քաղաքակրթութիւն» է:

Փտածութեան քաղաքակրթութիւն: Քաղաքակրթութիւնը, հոն ուր մարդկային կեանքերը կը բնորոշուին եւ կը կազմուի: Եւ այս՝ փտածութեան ընդմէջէն:

Մայր հայերէնիքն ալ անպակաս չէր այս «ըմբոստութեան» եթէ ըմբոստութեան եղանակը եղաւ «թաւշեայ», առանց մարդկային առճակատումի եւ զոհի, սակայն մնաց նոյն ընդվզումի բովանդակութեան մէջ: Բաւարար է այսքան փտածութիւն:

Սակայն փտածութիւնը արտ է, յոռի վարք ու բարք, որ ուղղակիօրէն առնչուած է մարդկային ու հաւաքական, ինչպէս նաեւ ազգային-պետական ու անոր բարոյական՝ իմա բարոյագիտական հասկացողութեան: Թէ ո՞ւր կը կայանայ նշեալ հաւաքականութեան պետականութեան բարոյական չափանիշերու ռազմավարութիւնը՝ համընդհանուր դաստիարակութեան գործընթացին մէջ:

Երբ ուսանողներ էինք Պէյրութի հայկական վարժարաններու մէջ մեր կրթական ծրագրին մէջ ներմուծուած էր «Ազգային կրթութիւն» դասապահը՝ շաբաթական մէկ պահի դրութեամբ: Այդ օրերուն հաւանաբար շատ չէինք կրնար ըմբռնել այդ դասապահի խորքային կարեւորութիւնը, սակայն այսօր՝ այո՛: Հոն էր, որ կը սորվեցնէին մեզի թէ ի՞նչ տեսակի քաղաքացիներ պէտք էր ըլլայինք, ինչպիսի՞ յարաբերութիւն եւ ներդրում ունենայինք մեր երկրին ու պետականութեան հանդէպ: Այս դասապահներուն մէջ չկար կրօնական բարոյագիտութիւն, բայց կար քաղաքացիական բարոյագիտութիւնը, ուր անհատը անկախ իր կրօնքէն եւ լեզուամշակութային ինքնութենէն պիտի սորվէր ըլլալ բարոյական չափանիշներով օժտուած քաղաքացի:

Բայց կ'արժէ նաեւ նայիլ ու վերանայիլ Աստուածաբանական ու Աստուածաշնչական հասկացողութիւններուն, նոյնինքն փտածութեան ընդհանրական բացատրութիւններուն ընդմէջէն: Այս առումով երբեք մտահան պէտք չէ ընել, թէ Աստուածաբանութիւնն ու Աստուածաշունչը կը մտնեն մարդոց հաւաքական կեանքերուն մէջ եւ ունին ըսելիք ու կեցուածք՝ տիրող մտահոգութիւններուն նկատմամբ:

Աստուածաշունչին մէջ, փտածութիւնը մարդկային «մեղքի» ազդեցութիւններէն մէկն էր, որ հետեւանք էր նոյն մարդուն յանցագործութեան: Սկիզբէն Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը, իմա՝ դրախտը, որ գուրկ էր ամէն նեղութենէ, հիւանդութենէ եւ մահէ: Բայց Ադամն ու Եւան «անհնազանդ» եղան Աստուծոյ ու «մեղքը» մտաւ «աշխարհին» մէջ: Այս մեղքն է, որ վարակուեցաւ ու հիւծեց Ադամն ու Եւան, ինչպէս նաեւ բոլոր մարդկութիւնը, որ յաջորդեց անոնց: «Վասնզի ինչպէս մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ եւ այն մեղքէն՝ մահը, այնպէս բոլոր մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանզի ամէնքն ալ մեղանչեցին» (Հռովմայեցի 5:12): Փտածութիւնը Աստուածաշունչի մէջ բարոյական ու հոգեւոր «նեխածութիւն» եւ «անկում» է, որ կը բացատրուի ու կ'արտայայտուի Աստուծոյ նկատմամբ մարդուն «անհնազանդութեամբ»:

Այդ երեւոյթը կը շարունակուի: Նոյի ժամանակ փտածու-

թիւնը շատ աւելի սաստկացած էր: «Եւ երկիրը Աստուծոյ առջեւ ապականեցաւ եւ անիրաւութեամբ լեցուեցաւ: Աստուած երկրի վրայ նայեցաւ եւ ահա ապականած էր, վասնզի երկրի վրայ ամէն մարմին իր ճամբան ապականեր էր»: (Մննդոց 6:11-12):

Այս իմաստով, փտածութիւնը ուղղակիօրէն առնչուած է մահուան: Եթէ ոչ ֆիզիքայէս, բայց հոգեպէս: «Դուք յանցանքներու ու մեղքերու մէջ մեռած էիք...» (Եփեսացի 2:1): Եւ կը շարունակէին քայել նոյն ընթացքով: «Անոնց մէջ ժամանակին կը քայլէիք այս աշխարհին բռնած ճամբովը, այս օրին իշխանութեանը իշխանին ուզածին պէս...» (Եփեսացի 2:2):

Բայց կայ միւթարութիւնը եւ փտածութեան դուրս գալու ելքը: «Բայց Աստուած, որ մեծ է ողորմութիւններով, իր առատ սիրովը, որով մեզ սիրեց, երբ յանցանքներու մէջ մեռած էինք, մեզ Քրիստոսին հետ կենդանացուց» (Եփեսացի 2:4):

Եւ այս առումով պիտք է հասկնալ, թէ ինչպէս փտածութեան ուժը կ'անշարժանայ իմա՝ կը մեռնի, երբ Աստուծոյ ուժը ներմուծուի մեր կեանքերուն մէջ ու կեանք տայ մեզի:

Աստուծոյ ուժը՝ Բարին է, ու անոր ճամբան դժուար է: Բայցեւա՛յնպէս կեանք կը պարգեւէ: Փտածութեան ուժը՝ չարն է ու անոր ճամբան դիւրին է...: Բայց եւ այնպէս կեանքեր կը քանդէ...:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան, երբ հարց տրուեցաւ իրեն թէ ինչու՞ թուրքիա տակաւին մինչեւ օրս Հայոց ցեղասպանութիւնը չէ

ճանչցած, ըսաւ. «Ճանչնալ այն ամէնը որ սխալ գործեր ես՝ ըլլայ այդ սովորական կեանքի մէջ, ընտանիքի թէ բարեկամներու. ճանաչու՛մք ուժ է: Եւ եթէ թուրքիա ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը, այդ իրականութիւնը ճամբայ պիտի բանայ թուրքիոյ՝ դառնալու համար ժողովրդավարական երկիր»: Պէտք է չարը ճանչնալը եւ զայն ընդունիլ իբրեւ սխալ, ինչպէս նաեւ բարին ընկալել իբրեւ ուժ է, որ կեանքեր կը պարգեւէ:

Ապահովութիւնը կամ խոստումը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ Աստուծոյ ուժը՝ Բարին, պիտի կարենայ յաղթել չարին, իմա՝ «վիշապին», որքան ալ դժուար ըլլայ անոր ճամբան: «Ուստի վար ձգուեցաւ մեծ վիշապը, այն առաջուան օձը, որ բանսարկու ու սատանայ կը կոչուի, որ բոլոր աշխարհը մոլորեցուց...» (Յայտնութիւն Յովհաննոս 12:9):

Հետեւաբար, քիչ մը ամէն տեղ, որոնց մէջ նաեւ Լիբանան, տակաւին ոտքի կանգնած են անոնք, որոնք կ'ուզեն «վար ձգել վիշապը», իմա՝ չարը, փտածութիւնը, որովհետեւ անոնք կը ցանկան ունենալ Բարին՝ կեանք պարգեւողը:

Բարին կերտելու համար մենք պէտք ունինք քաղաքակրթութեան մը, որ փտած չէ: Այլ քաղաքակրթութիւն մը, որ Բարին է ու կեանք կը պարգեւէ:

Բարին կերտելը դժուար ճամբայ է: Բայց այս դժուար ճամբան մեզ կը զօրացնէ: Զօրութիւն մը, որուն միջոցաւ կրնանք ըսել. «Ոչ՝ փտածութեան քաղաքակրթութեան»:

### Հայկական Տաղասացութիւն 1100-1722

Շարունակուած էր 16-էն

թիւններու մէջ. «Ի կայսերաց պատուասիրեալ միշտ մեծարիս, / Ի սուրբ գրի արձանացեալ երգաբանիս, / Քան գարեգակն ի մէջ ծաղկանց գերափայլիս, / Զի քեւ եւ ես երջանկանամ տարին բոլոր»:

Եւ ահա հայկական տաղերգութեան ամենէն կենսուրախ ու վերջին դէմքը՝ բանաստեղծ, երգահան, ձեռագիրներու ծաղիկող, որմանակարիչ, Վրաստանի թագաւոր Վախթանգ Զ-ի պալատական երգիչ (եւ նկարիչը), Սայաթ Նովայի նախորդը եւ հոգեշնչողը՝ Նաղաշ Յովնաթան:

Նաղաշ Յովնաթանը ծնած է 1661ին գինեւէտ Նախիջեւանի Շոռոթ գիւղի մէջ: Յիշենք, թէ Նախիջեւանը Գողթան երգիչներու օրրանն էր: Նաղաշ Յովնաթանը, սիրային եւ խոհական երգերու հարուստ ժառանգութիւն ձգեց ինճոյքի ուրախ սեղաններուն վրայ: Բնութիւնն ու գարունն են անոր ներշնչման աղբիւրը: Ն. Յովնաթանը դրուատեց աշխատասիրութիւնը, գիտութիւնը եւ ստեղծագործ կեանքը: Անոր նշանաբանն էր. «Լաւ է ընդ իմաստնոց միշտ քաղցած մնալ, քան ընդ տգիտաց ուտել ու ցնծալ»: Ըստ Ն. Յովնաթանի չկայ գեղեցկութիւն առանց սիրոյ. «Լուսնի նման պայծառ

երես բոլորած, / Ես մնացի կարօտ՝ համբուրից համարգ / Վարսերդ ոսկի թելի նման ոլորած, / Ես մնացի կարօտ՝ ետ տալոյ համար: / Ունքերդ կապել է կամար կրակով, / Աչքերդ վառել է պայծառ ճրագով, / Ափսոս, որ ծածկել ես բարակ լաչակովդ / Ես մնացի կարօտ՝ տեսնելոյ համար»: Մարդը աշխարհ եկած է վայելելու համար, ետք արժանի է բնական գեղեցկագոյն համեմատութիւններով կատարուած փառաբանութեան. «Բերանդ՝ կարմիր գինի, լեզուդ՝ համեղ նուշ, / Դու մինակ կու իմես ու կ'անես անոյշ, / Նաղաշն թողել ես ծարաւ ու բէռը. / Ես մնացի կարօտ՝ իմելոյ համար»:

Յօդուածը կը վերջանայ Ն. Յովնաթանի ցնծալից մէկ երգով. «Նստեմք ի մէջ լիս, հարք եւ եղբարք եւ մեծ պարոնայք, / Գոհանամք զՏեառնէ, որ ունիմք սեղան, դուք միշտ շէն կենայք: / Խնդրեմք, որ այսօր, քան զամենայն օր, շատ ուրախանայք: / Թասերն չինի, կարմիր գինի, ձեզ անոյշ լինի, ձեզ անոյշ լինի»:

Նոյնպէս մենք, յարգելի ընթերցող, երգենք մեր տաղերը, ուրախանանք եւ միշտ փառք տանք հայրենի գինեւէտ մայր հողին: Հայկական տաղերով թող հարուստանայ ձեր սեղաններն ու հաւաքոյթները:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net



### Կանանց Տեսակներ, Որոնք Հաճելի են Բոլոր Տղամարդոց Համար

Անհնար է կազմել այնպիսի բանաձև, որ տղամարդուն պիտի ստիպի սիրահարել ունե կնոջ: Մարդկության ուժեղ կէսի իւրաքանչիւր ներկայացուցիչ ունի ընտրութեան իր չափանիշերը եւ կեանքի ուղեկիցի իր կերպարը: Այնուամենայնիւ կան կանայք, որոնք հաճելի են տղամարդոց մեծամասնութեան:

1) Գրաւիչները: Գաղտնիք չէ, որ տղամարդիկ կը սիրեն աչքերով: Եւ անոնցմէ իւրաքանչիւրը կ'ուզէ իր կողքին տեսնել գրաւիչ կին: Խօսքը երկնային գեղեցկութեան մասին չէ, եւ այդպիսի գեղեցկութեան հասկացութիւնը բաւականին բազմի մաստ է. մէկը կը նախընտրէ շիկահեր, միւսը՝ կը խենթանայ սեւահերներու համար, ոմանք կը սիրեն նիհար կիները, իսկ ոմանք ալ՝ գանգրահերները:

Բարեբախտաբար, իւրաքանչիւր աղջիկ կրնայ գրաւիչ ըլլալ: Ատոր համար պարզապէս անհրաժեշտ է որոշ ջանքեր գործադրել: Ամէն պարագայի, ան պէտք է խնամուած ըլլայ եւ հետեւի իր արտաքին տեսքին, կազմուածքին, զգեստապահարանին: Համապատասխան դիմապարզման, ոճաւորման եւ հագուստի օգնութեամբ կարելի է թաքցնել թերութիւնները, ընդգծել առաւելութիւնները եւ դառնալ ցանկալի: Մինչդեռ նոյնիսկ թիւ մէկ գեղեցկուհին՝ չսանտրուած մագերով կամ անխնամ եղունգներով՝ կրնայ վանել ինքզինք: Եւ ամենակարեւորը, գրաւիչ կինը՝ ինքնավստահ կինն է:

2) Խելացիները: Տարիներ շարունակ հասարակութեան մէջ արմատացած կարծիք կայ, թէ տղամարդիկ կը վախնան խելացի կիներէն եւ կը գերադասեն միամիտ չիմարիկները: Ասիկա իրականութեան չի համապատասխաներ: Հաւասարակշռուած չափահաս տղամարդը երբեք իր կեանքի ընկերուհի պիտի չընտրէ կին մը, որ պիտի չփայլի իր խելացութեամբ: Եթէ անոր հետ խօսելու բան չկայ, բնականաբար ան արագօրէն պիտի ձանձրացնէ իր գուզընկերը: Տղամարդու համար, յարաբերութիւններու մէջ, մեծ նշանակութիւն ունի նաեւ սիրելիի աջակցութիւնը եւ դժուար իրավիճակի ժամանակ խորհուրդներ ստանալու հնարաւորութիւնը: Այնպէս որ՝ գրաւչութեան համար պայքարի ընթացքին պէտք է մոռնալ նաեւ մտաւոր զարգացման մասին:

3) Վստահ եւ հաղորդակցուող:

Եթէ կինը ինքնավստահ է, բնականաբար ան կը գրաւէ տղամարդիկը: Նման կանայք իրենց կ'ընդունին բոլոր թերութիւններով եւ, իբրեւ հետեւանք, չեն փորձեր բոլորը դարձնել կատարեալ: Տղամարդիկ կը սիրեն ընկերասէր եւ ուրախ կիները, որոնց հետ շփուելը դիւրին է: Միեւնոյն ժամանակ, մի՛ շփոթէք վստահութիւնը մեծամտութեան, իսկ բաց ըլլալը՝ մատչելիութեան հետ: Նոյնիսկ երեք վկայականով ամենապայծառ գեղեցկուհին կը վանէ, եթէ ամբարտաւանօրէն ինքզինք պահէ մեծամիտ կամ հաւատայ, որ շրջապատի մէջ բոլորը պէտք է իր բարեհաճութեան ձգտին: Իսկ թեթեւ վարքով աղջիկը նոյնպէս չ'առաջացներ երկարատեւ հետաքրքրութիւն՝ չափազանց մատչելի ըլլալուն պատճառով:

4) Կանացի եւ հոգատար: Կոպիտ կանայք հազուադէպ կը գրաւեն տղամարդիկը. ասիկա փաստ է: Ինչպէս նաեւ այն, որ տղամարդիկ կը նախընտրեն յարաբերութիւններ կանացի գուզընկերուհիներու հետ: Եւ խօսքը այստեղ ոչ թէ երկար մագերով կամ մինչեւ գետին հասնող փէշի մասին է, այլ անոր, որ կինը ինչպէս կրնայ ներկայացնել ինքզինք: Եթէ ան կ'օշկակարի նման կը հայհոյէ, ինքզինք կը պահէ յարձակողական եւ ջղայնացնող, բնականաբար եզակի տղամարդը պիտի չուզէ յարաբերութիւններ հաստատել անոր հետ: Հոգատարութիւնը նոյնպէս կարեւոր է. ատոր միջոցով տղամարդը կը գիտակցի իր նշանակութիւնը: Հոգեբանները կը պնդեն, որ գուզընկերուհի մէջ ուժեղ սեռի ներկայացուցիչները կը փնտռեն իրենց մօր յատկութիւնները, քանի որ յարաբերութիւններու մէջ անոնք, ինչպէս եւ կանայք, ջերմութեան եւ հոգատարութեան կարիք ունին: Իհարկէ, ծանօթութեան սկիզբէն պէտք չէ դուք ձեզ պահէք մօր նման, բայց պէտք է թերազնահատէք նաեւ խնամքի որոշ դրսեւորումները: Իրօք, երբեմն կարեւոր է տղամարդուն ընդամենը անկեղծօրէն հարցնել, թէ ինչպէս անցաւ անոր օրը, եւ ատիկա բաւարար է: Ամենակարեւորը: Ինչ ալ որ ըլլայ, տղամարդոց հաճելի թուալու համար, առաջին հերթին, կարեւոր է ունենալ ձեր «ես»-ը: Միայն այդպէս կարելի է հանդիպել տղամարդու, որ կը սիրէ ոչ թէ փայլուն ամսագրերէն երեւակայական խոհալը, այլ իրական կին՝ այնպէս, ինչպէս է ան:

### Ոչինչ Այնքան Կը Ծերացնէ, Որքան Երիտասարդանալու Մոլուցքը. Ասոյթներ Կանանց Տարիքի Մասին

Այս խօսքերը կարդալէ ետք՝ դուք պիտի դադրիք քողարկելէ անձնագրին մէջ եղած տարեթիւերը:

Քինը երիտասարդ է այնքան ժամանակ, քանի դեռ կը սիրեն զինք: (Կիւստաւ Ֆլորէր) Քարեցեցիք դուք ձեզի. քանի՞ տարեկան պիտի ըլլայիք, եթէ չգիտնալիք քանի տարեկան էք: (Ուէյն Տայլըր)

Երեսուն տարի ... Կար ժամանակ, երբ ինծի կը թուէր, որ ես չեմ կրնար ապրիլ մինչեւ քսան տարեկան, այնպէս կ'ուզէի արագ մեծնալ: Իսկ յետոյ...: (Մարիա Ռեմարք)

Եթէ դուք դեռ ունակ էք հիասթափուելու, կը նշանակէ դեռ երիտասարդ էք: (Մառա Չըրչըլ)

Միակ բանը, որ կինը, երբեք չի մոռնար, ծննդեան տարեթիւն է, ճիշդ այն ժամանակ, երբ վերջապէս ընտրած է զայն: (Տորոթի Փարքըր)

Տարիքը պարզապէս թիւեր են, ոչ թէ մտաւոր վիճակ կամ որեւէ յատուկ պահուածքի պատճառ: (Սեսիլիա Ահերն)

Կարելի չէ վստահիլ այն կնոջ, որ չի թաքցնէ իր տարիքը: Նման կին չի յապաղիր ըսելու ցանկացած բան: (Օսքար Ուայլտ)

Որքան տարիքով է մարդը, այնքան աւելի շատ է անոր կեանքին մէջ ա՛յն, ինչ որ այլեւս անհնար է ուղղել: (Հարուգի Մուրազմի)

Կինը եօթը տարի աւելի փոքր է, քան կը պնդեն անոր ընկերուհիները, եւ հինգ տարի աւելի մեծ է, քան կու տան անոր տղամարդիկ: (Ճիւսա Լոլոպրիկիտա)

Բարութիւնն ու իմաստութիւնը ծերութեան յատկութիւններ են: Քսան տարեկանին կնոջ համար շատ աւելի հետաքրքրական է ըլլալ անսիրտ եւ թեթեւամիտ: (Ռէյ Պրետտըրի)

20 տարեկանին ձեր դէմքը բնութիւնը կու տայ, 30-ին զայն կը կերտէ կեանքը, բայց 50 տարեկանին դուք պէտք է վստահիք

զայն... Ոչինչ այնքան կը ծերացնէ, որքան երիտասարդանալու մոլուցքը: 50-էն ետք ոչ ոք այլեւս երիտասարդ է: Բայց ես գիտեմ 50 տարեկաններ, որոնք աւելի գրաւիչ են, քան վատ խնամուած երիտասարդ կանանց երեք քառորդը: (Գօգօ Շանէլ)

Մարդու անձնագիրը անոր դժբախտութիւնն է, քանի որ մարդը միշտ պէտք է ըլլայ տասնութ տարեկան, իսկ անձնագիրը ընդամենը կը լիչեցնէ, որ դուք կրնաք ապրիլ տասնութ տարեկանի նման: (Ֆարիսա Ռանեւսկայա)

Խնդիրը տարիքի մէջ չէ, այլ՝ հաղորդակցութեան մշակուած թիւ եւ մտաւոր զարգացման մակարդակի: (Ուինսթըն Չըրչըլ)

Քսանահինգ տարեկանին հանձարեղ կրնայ ըլլալ ունէ մէկը: Յիսուսէն ետք անոր համար արդէն որեւէ բան պէտք է կա տարուի: (Չարլզ Պուգոլսփին)

Կնոջ գեղեցկութիւնը կ'աճի իր տարիքին գուզահեռ: (Օտրի Հեփպըրն)

Որեւէ տարիքի մէջ շատ աւելի հետաքրքրական է ժամանակ անցընել քեզմէ տարիքով մէկուն հետ, քան ձեր հասակակիցներուն: (Ճուտի Ֆոսթըր)

Տարիքը ոչ թէ այն է, թէ քանի տարեկան էք, այլ այն՝ թէ ինչպէս դուք կը զգաք զայն: (Գաբրիէլ Կարսիա Մարքէս)

Ցանկալի եւ գեղեցիկ կարելի է ըլլալ որեւէ տարիքի: Եւ հակառակը՝ դուք կրնաք ձեզի զգալ ոչնչութիւն, անարժէք մե - տաղադրամ եւ թաքնուիլ սեփական բարոյցի թնրութեամբ կարողարին մէջ՝ ծաղկուն 18 տարեկանին: Ողջ խնդիրը ինքնագիտակցութեան եւ ներքին ներդաշնակութեան մէջ է: (Քիմ Քէթրոլ)

Ան, որ ինքզինք չի պահեր տարիքին համապատասխան, միշտ կը վճարէ անոր համար: (Վոլթեր)

Տարիքը այն է՝ ինչ կայ մեր մտքերուն մէջ: Եթէ դուք ատոր մասին չէք մտածեր, անիկա գոյութիւն չունի: (Մարք Թուէյն)

### Ինչպէս Կեանքը Աւելի Լաւը Դարձնել 2020 Թուականին

Հաւանաբար հիմա չէք մտածեր, որ 2020-ը հրաշալի տարի պիտի դառնայ: Եւ այն, թէ ինչպէս կ'ընթանաք այժմ, պիտի հաղորդէ տրամադրութիւն այն ամէնուն, ինչ ձեզի կը սպասուի: Բայց նախ, բոլորս պէտք է մտածենք քանի մը կարեւոր բանի մասին, որոնք թոյլ պիտի տան հեռանալու անցեալէն եւ նայելու ապագային պարզ մտքով: Որոնք են այն կարեւոր բաները, որոնք պիտի կարենան ապահովել նոր տարուան դրական սկիզբը:

- 1) Դադրեցէք փնտռելէ արդարացումներ:
- 2) Մտածեցէք կատարուած սխալներու մասին եւ փորձեցէք մոռնալ զանոնք:

3) Դադրեցէք ընել այն, ինչը կը դժբախտացնէ ձեզի:

4) Բաց մի ձգէք հնարաւորութիւնները:

5) Հրաժարեցէք այն մարդոցմէ, որոնք կը խոչընդոտեն ձեր զարգացումը:

6) Ցատակացուցէք ձեզի համար, թէ ինչ կ'ուզէք նոր տարիէն:

7) Ժամանակ տրամադրեցէք ինքնավերլուծութեան:

8) Ազատուցէք անիրատեսական ակնկալիքներէն:

9) Մի մոռնաք սիրոյ եւ ինքնահոգատարութեան մասին:

10) Գնահատեցէք անոնք, որոնք ձեր կողքին եղած են:


11) Դուրս եկէք յարմարաւէտութեան ձեր գոտիէն:

**Նոր Գիրքեր «Սրտագեղիտկումներ» Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան**

Շուրջ 160 էջերէ բաղկացած այս հատորէն բացի Վեր. Դոկտ. Վահան Թութիկեան հեղինակն է նաեւ 42 այլ հատորներու, որոնք առաւելաբար կ'ընդգրկեն, կրօնական, ազգային-հասարակական եւ խոհական նիւթեր:

2020 թուականին անգլերէն լեզուով լոյս տեսած լաթակազմ այս հատորը՝ հրատարակուած է Armenian Heritage Committee-ի կողմէ:

**Heartfelt Reflections**  
Rev. Dr. Vahan H. Tootikian



Սրտագեղ խոսկումներ  
Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան

A Publication of the Armenian Heritage Committee



**Զօրացիւք Օժանդակենք Փրկենք**

Syrian Armenian Relief Fund  
P. O. Box 1948  
Glendale, CA 91209-1948





### ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ

Լուլու (Խայեան) Ֆերմանեանի մահուան քսաներորդ (20) տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 26 Յունուար, 2020-ին, Ս. Պետրոս Հայց Առաքելական Եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys յաւարտ Ս. Պատարագի: Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ: Մզակիրներ՝ Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան Վիզէն Գուլումճեան

### «Աննախաղէպ» Կուրուփիւն

Շարունակուած էջ 2-էն

ցանք, տեսա՞ք, որ մենք աննախաղէպ ենք»:

Ըհը, տեսանք:

Բայց հասարակութիւնը շարունակում է մնալ նոյն հասարակութիւնը: Հասարակութիւնը յեղափոխութեանը մասնակցել է, որ տեսնի իր ապրած քսան տարիների մղձաւանջի հեղինակների արդար պատիժը, ոչ թէ ամէն օր սարսափով համոզուի, որ սրանց ձայնն օրէցօր աւելի ու աւելի է բարձրանում ու լկտիանում: Հասարակութիւնը չի ուզում երկարուծիք եւ խառնիխուռն ճառեր լսել նորերի «աննախաղէպութեան» մասին: Հասարակութիւնն «աննախաղէպութիւն» չի ուզում, հասարակութիւնն ուզում է մի սովորական ուժեղ իշխանութիւն, որն ինչպիսի նպատակասլացութեամբ յեղափոխութիւն արեց, նոյնպիսի նպատակասլացութեամբ էլ կատարում է իր խոստումները, եւ այդ խոստումները միայն «տնտեսական յաջողութիւնները» շրջանակով սքողելն էլ մանր խորամանկութիւն է համարում, որովհետեւ որքան էլ նախկին աւագակախումբը փորձի այս յեղափոխութիւնը «յանուն հացի»

բնորոշել, նոր իշխանութիւնն էլ տրուի այս սաղրանքին, հասարակութիւնը դեռ չի մոռացել, որ իր փողոց դուրս գալու գլխաւոր պատճառն արդարութեան հաստատման ձգտումն էր, որը պէտք է արտայայտուէր աւագակախմբի անդամների նոյնքան արդար պատժով:

Եւ ինչ ստացաւ հասարակութիւնը:

Ստացաւ լկտի եւ ազրեսիւ նախկինների աննախաղէպ ամբարտաւանութիւնը (ա՛յ, սա իրօք աննախաղէպ է) եւ նորերի «թաւշեայ» կոկետութիւնները:

Ահա թէ ինչու է նախկինների կարկառուն «արդարադատը» խօսում «ընդհանուր մաղձոտ միջնորդի» մասին:

Սրանք զրկուել են իշխանութիւնից եւ մաղձոտած են, հասարակութեան սպասումներն էլ աստիճանաբար մարում են, եւ մաղձը գլուխ է բարձրացնում, իսկ թէ դրանից ովքեր կարող են օգտուել, հարցրէք Դաւիթ Յարութիւնեանին եւ նրա նմաններին:

Սրանք, ի տարբերութիւն «աննախաղէպ» նորերի», հիանալի գիտեն ե՛ւ յարձակուելու, ե՛ւ իրավիճակից օգտուելու ուղիները: «Ի ԼՈՒՐ»

### Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքի Դիւանը

Շարունակուած էջ 13-էն

Եւ եկեղեցականութեան վիճակը, նախկին եւ դաժան օրերու բաղդատութեամբ, եկեղեցիներու ու քահանայից թիւերու բաղդատութեամբ:

Գէորգ Զ Կաթողիկոսի յատուկ հատորին մէջ յայտնաբերուած է Ստալինեան բռնութիւններու առեւն Հայ Եկեղեցու շատ նկուն վիճակը, որուն համար Կաթողիկոսը շատ վտանգալից եւ սակայն նոյնքան քաջարի դիւանազիտութեամբ որպէս Բ Պատերազմի Հայ Եկեղեցու օժանդակութիւն բռնակալին ընծայած է քսաներկու հրասայլեր կարմիր Բանակին, արտասահմանեան յատուկ հանգանակութիւններով: Անշուշտ Կաթողիկոսը, տակաւին Տեղակալ, «դժուարինս կը խնդրէր» եւ սակայն որպէս «վարձատրութիւն» շատ աւելին կ'ակնկալէր եւ կը

յաջողէր ստանալ: Ստալին հրասայլերուն «գինը» պէտք էր վճարէր:

Անկարելին կարելի դարձնելով Ստալինի հետ կը տեսակցէր Քրեմլինի մէջ անձամբ ու կը ներկայացնէր տասնաբանեայ խնդրանք Հայ Եկեղեցու բարելաման համար, յատկապէս շատ ուշացած եւ անգամ մըն ալ ձախողած Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարմար արտօնութիւնն ու էջմիածնի Մայր Աթոռի հողային գրաւեալ տարածքներու մի քանիներուն վերադարձը, Հոգեւոր ճեմարանին բացումը, եւ «էջմիածին» ամսագրի հրատարակութիւնը: Ստացաւ իր խնդրանքներուն մեծագոյն մասը, խնդրելով նաեւ որ Ստալին արտօնագիրը ստորագրէր իր ներկայութեան:

Մեծ Հայրապետ, իսկապէս «դժուարինս խնդրեցեր», եւ եթէ այսօր Մայր Աթոռը աննախաղէպ

### Սերունդներու Ռահվիրան

Շարունակուած էջ 6-էն

ըուժը բարիին մղելով: Մանաւանդ, երբ կ'ապրինք տարբեր երկիրներու եւ միջավայրերու մէջ, պէտք է զանազանութիւն մեր մարդկայնական ու ծառայատիրական դրսեւորումով: Թշուառին, յափշտակեալին արդարացի գուպարը նոյնքան կը յուզէ ընկերվարական հայ մարդը:

Գաղափարական հաւատարմութիւն.- Ի հեճուկս բազմապիսի ճնշումներու, ուղղակի սեղմումներու եւ յարահալած պայմաններու, ան մնաց իր գաղափարներուն անշեղ մարտիկը:

Մահն ու սարսափը դիմաւորեց բարձր ճակատով: Կուսակցականութիւնը ուղեգիծ է, մնայուն, անյեղի, անզրաւ: Ոմանք, յատկապէս այս օրերուն, կուսակցականութիւնը վերածած եօթեանի, օր մը հոս եւ օր մը հոն եւ ապա երրորդ կամ չորրորդ ընտրանք: Սերունդ-

ներու ռահվիրային համար այս թեթեւաբարոյ ուստոստումները խստօրէն դատապարտելի էին:

Սարգիս Տիրունիի նահատակութեան հետք, սերունդներ ընթացան անոր ճանապարհով եւ ուռճացան անոր դասերով: Ռահվիրայի վայել պատուանդան նուաճեց ան՝ որպէսզի ամէն տարի խոնարհինք իր յիշատակին առջեւ եւ ապա վերանորոգենք մեր ուխտը՝ հաւատարիմ մնալու հայրենիքին, արդարութեան եւ գաղափարական մեր դպրոցին հանդէպ:

Պարծանք քեզի, հազար պարծանք,

ով մեծ անմահ Տիրունի Որ քո կարմիր սուրբ արիւնով պսակեցիր մեր ուղին: Երդում կու տանք շիրմիդ առաջ մայր դրօշին հնչակեան Որ պիտի քայլենք այդ ուղիով մինչեւ վերջին համգրուան: ԽՄԲԿԻՍԿԱՆ «ԱՐԱՐԱՏ»

### Կոչ-Յրաւեր Թերահաւատներուն

Շարունակուած էջ 6-էն

վերելակները արդիականներով փոխարինելու արդէն սկսած աշխատանքը՝ միութարական տուեալ մը: Ի հարկէ, տարիներու կուտակուած հարցերը կամ քանդուած կառուցները վերակառուցելը կը կարօտի ժամանակի, համբերութեան, նիւթական միջոցներու: Եւ ուրեմն փութանակի նոր Հայաստան տեսնելու ոմանց շտապողականութիւնը աւելի կը նմանի կեղծ կարեկիցի, քան՝ սրտցաւ քաղաքացիի:

Ահա այստեղ է, որ վարչապետին թերահաւատներուն ուղղած կոչը կը դառնայ հրաւէր մը լաւատեսութեան, համախումբ աշխատանքի եւ հայրենակերտումի: Ի վերջոյ հայրենիքը անձի կամ խմբակի մը չի պատկանիր, այլե՛ւ՝ ան հաւաքական, մնայուն եւ յաւերժական օճախն է հանուր հայութեան:

Ակներեւ է, որ ոմանց մօտ նոր իշխանաւորները խժբժելը վերածուած է սիրողական արհեստի: Զօր ու գիշեր կը մտմտան՝ թէ ինչպէս թիրախաւորեն այս կամ այն երեւոյթը, այս կամ այն պաշտօնատար անձնաւորութիւնը: Արդէն վարակիչ հիւանդութեան սկսած է նմանիլ խումբ մը շարախօսներու հետեւողական եւ արդէն խիստ տհաճ ելոյթները, թունաթաթախ սլաք-

ները: Մինչդեռ, պահը ոչ միայն կը թելադրէ լրջութիւն եւ զսպուածութիւն, այլե՛ւ՝ կը պարտաւորեցնէ ըլլալ սթափ եւ շրջահայեաց՝ բոլորին ուշադրութիւնները սեւեռելով պետականաշինութեան եւ հայրենաշինութեան առաքինութեան ուղղութեամբ: Եւ մանաւանդ գործի լծել վերապահները: Վարչապետին խօսքով՝ յուսովա՛ռել թերահաւատները:

Հետաքրքրականն այն է, որ մինչ վարչապետը իրեն բնորոշ ոճով, այդ կոչ-հրաւէրը կ'ուղղէր ոչ թէ փափուկ սալունէն (ինչպէս անցեալ տասնամեակներուն էր), այլ՝ Երեւանի հրապարակէն, խուռնեւրամ ու խանդաբորբ ժողովուրդին ծոցէն, անդին՝ անուղղելի թերահաւատներ կը լուսանկարէին տօնախմբող ներկաները, յատկապէս օտարագրի (Մայրագոյն Արեւելքէն) երեւանաբնակները՝ հեզնելու համար վարչապետի խօսքին հասցէատէրերը եւ ուրեմն... վարչապետին ուղեբձը:

Արդէն խժահունչ աղմուկի նմանող նենգամիտներու ձայնասկաւառակը օր մը պիտի հնչէ՞ դրական եւ լաւատեսական եղանակով եւ թերահաւատներէն ետք անհաւատները յուսովառէ շինարար եւ բարի աշխատանքով:

կը ծաղկի եւ կը բարգաւաճի վազգէն Ա Կաթողիկոսի օրերէն սկսեալ, կարգալու ենք մօտաւոր անցեալի հերոս Հայրապետներուն՝ Խորէն Ա, Գէորգ Զ, եւ վազգէն Ա Ամենայն


Հայոց Կաթողիկոսներուն սխրագործութիւններն ու բարձր դիւանազիտական յարաբերութեանց մասին Սանդրօ Բեհրուզեանի վաւերագրական հատորներուն մէջ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ ԲԱՐԵՉԱՐԴՈՒԱԾ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸՍՍԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՍՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**



# ՄԱՐԶԱԿԱՆ

## «Լիւերպոլը» Յաղթեց «Մանչեսթեր Յունայթեդին»



Անգլիայի առաջնութեան 23-րդ տուրում առաջատար «Լիւերպոլը» գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորութեամբ սեփական խաղադաշտում մրցեց «Մանչեսթեր Յունայթեդի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:0 հաշուով:

14-րդ րոպէին անկիւնայինից յետոյ «Լիւերպոլը» հոլանտացի պաշտպան Վիրջիլ վան Դեյքը օգտագործեց անգլիացի պաշտպան Տրենտ Ալեքսանդր-Առնոլդի փոխանցումը եւ գրաւեց հիւրերի դարպասը:

25-րդ րոպէին կոլ խփեց պրագիւացի յարձակուող Ռոբերտո Ֆիրմինոն, սակայն VAR-ը ցոյց տուեց, որ «Մանչեսթեր Յունայթեդի» իսպանացի դարպասապահ Դաւիդ Դէ խեայի դէմ կանոնների խախտում է թույլ տուել Վիրջիլ վան Դեյքը, եւ կոլը չգրանցուեց:

Աւելացում ժամանակում լիւերպոլեան թիմի առաւելութիւնը կրկնապատկեց եգիպտացի յարձակուող Մոհամեդ Սալահը: Կոլային փոխանցումը կատարեց դաշտի տէրերի պրագիւացի դարպասապահ Ալիսոն Բեքերը:

«Լիւերպոլը» 22 խաղից յետոյ 64 միաւորով գլխավորում է մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղում ընթացող «Մանչեսթեր Սիթին» 23 խաղում վաստակել է 48 միախոր: «Մանչեսթեր Յունայթեդը» 5-րդն է՝ 34 միաւոր:

## «Մանչեսթեր Սիթին» ու «Արսենալը» Միաւորներ Կորցրեցին

Անգլիայի առաջնութեան 23-րդ տուրում ախոյեան «Մանչեսթեր Սիթին» հիւրընկալեց «Քրիսթալ Փելասին»: Կատալոնացի խոսեպ Գուարդիոլայի գլխավորած թիմը բաւարարուեց 1 միաւորով: Գրանցուեց ոչ ոքի՝ 2:2:

Առաջինը կոլ բաց թողնելուց յետոյ «Մանչեսթեր Սիթին» արժենթինացի յարձակուող Սերխիո Ագուերոյի դուբլի շնորհիւ վերջնամասում առաջ անցաւ հաշուի մէջ, սակայն վերջին րոպէին ինքնագոլի հեղինակ դարձաւ մանչեսթերեան թիմի պրագիւացի կիսապաշտպան Ֆերնանդինյոն:

«Մանչեսթեր Սիթին» 48 միաւորով երկրորդ տեղում է եւ 2 հանդիպում քիչ անցկացրած «Լիւերպոլից» հետ է 13 միաւոր:

«Արսենալը» իսպանացի Միկել Արտետայի գլխավորութեամբ մրցեց «Շեֆիլդ Յունայթեդի» հետ եւ յաղթանակը բաց թողեց վերջնամասում: Գրանցուեց ոչ ոքի՝ 1:1: Լոնտոնեան թիմը 29 միաւորով 10-րդն է, «Շեֆիլդ Յունայթեդն» ունի 33 միաւոր եւ 7-րդն է:

34 միաւորով 6-րդ տեղում է «Վուլվերհեմփթոնը», որն արտագնայ խաղում 3:2 հաշուով պարտութեան մատնեց «Սաութհեմփթոնին»:

## Ռոմալոուի Դուբլը Յաղթանակ Բերեց «Յուվենտուսին»

Իտալիայի առաջնութեան 20-րդ տուրում ախոյեան թուրինի «Յուվենտուսը» հիւրընկալեց «Պարմային»: Իտալացի Մաուրիցիո Սարիի գլխավորած թիմը յաղթեց 2:1 հաշուով պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոմալոուի դուբլի շնորհիւ:



«Յուվենտուսը» 51 միաւորով գլխավորում է մրցաշարային աղիւսակը եւ 4 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում ընթացող Միլանի «Ինտերի» նկատմամբ: «Պարման» 7-րդն է՝ 28 միաւոր:

## «Ռոմայի» Վստահ Յաղթանակը Յետնապահի Նկատմամբ

Իտալիայի առաջնութեան 20-րդ տուրում «Ռոման» պորտուգալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխավորութեամբ հիւրընկալուեց «Չենոպին»:

Մայրաքաղաքային թիմն առաւելութեան հասաւ 3:1 հաշուով: Հայաստանի հաւաքակազմի եւ «Ռոմայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը յատուկ նշանակում էր հանդիպմանը: Նա վերականգնուեց է ազդրի վնասուած քից յետոյ:

«Ռոման» 38 միաւորով բարձրացաւ չորրորդ տեղ: «Չենոպն» նախավերջինն է՝ 14 միաւոր:

## Արթուր Ալեքսանեանը Եզրափակիչում Յաղթեց Ատրպէյճանցուն Կարապետ Չալեանը՝ Արծաթ Սետալակիր



Յունահռոմէական ըմբշամարտի օլիմպիական ախոյեան, աշխարհի եռակի, Եւրոպայի քառակի եւ Եւրոպական խաղերի ախոյեան Արթուր Ալեքսանեանը ոսկէ մետալ նուաճեց Ֆրանսայի Նիցա քաղաքում ընթացող օլիմպիական ախոյեան Հենրի Դեգլանի անուան Գրան Պրի մրցաշարում: Եզրափակիչում Արթուր Ալեքսանեանը 3:1 հաշուով յաղթեց Ատրպէյճանի ներկայացուցիչ Օրխան Նուրիեւին:

77 կգ քաշայինների եզրափակիչում Հայաստանի ներկայացուցիչ Կարապետ Չալեանը նուաճեց արծաթէ մետալ՝ 2:5 հաշուով պարտուելով Ղազախստանի ներկայացուցիչ Դեմե Ժադրաեւին:

## Մակրեկորի 40 Վայրկեան է Պահանջուել Սերոնէին Նոկաուտի Ենթարկելու Համար

Լաս Վեկասուսում աւարտուել է UFC 246 մրցաշարը, որի գլխավոր իրադարձութեան շրջանակներում մրցել են UFC-ի 2 քաշային կարգերում նախկին ախոյեան Կոնոր Մակգրեգորը եւ տիտղոսի նախկին յաւակնորդ Դոնալդ Սերոնեն:



Մակգրեգորն առաջին վայրկեաններից առաւելութիւն է ստացել մրցակցի նկատմամբ: Նրա ելույթն այնքան համոզիչ է եղել, որ մրցավարը ստիպուած է եղել ժամանակից շուտ ընդհատելու մենամարտը: Այդպիսով, իր լանդացուց ընդամէնը 40 վայրկեան է պահանջուել Սերոնենին նոկաուտի ենթարկելու համար:

Մակգրեգորն իր առաջին յաղթանակն է տօնել սկսած 2016 թուականի Նոյեմբերից, երբ նրան յաջողուել էր առաւելութեան հասնել Էդի Ալվարեսի նկատմամբ ու տիտղոս նուաճել թեթեւ քաշային կարգում: Սերոնեն երրորդ անընդմէջ պարտութիւնն է կրել: Նա մինչ այս զիջել էր Տոնի Ֆերգյուսոնին եւ Ջասթին Գեթջիին:

## Պլատինի. ՖԻՖԱ-ն ու CAS-ը Մաֆիայի Պէս Են Գործում

ՈւեթԱ-ի նախկին նախագահ Միշել Պլատինին ՖԻՖԱ-ի ու Լոզանի սպորտային մրցավարական դատարանի (CAS) գործունէութիւնը համեմատել է մաֆիայի հետ:

«Ես ատում եմ անարդարութիւնը, երբեք չեմ համակերպուի դրա հետ: ՖԻՖԱ-ն ու CAS-ը մաֆիայի պէս են գործում: Ես դա ներսից եմ նկատել: Այդ կազմակերպութիւնների իրաւաբանները ընկերների խումբ են, որոնք ոչ մէկին չեն ենթարկուած:

ՖԻՖԱ-ի այժմեան ղեկավարութիւնը կարող է ստիպել իւրաքանչիւրին անհետանալ ֆուտբոլից: Տուեալ դէպքում դա պատահեց ինձ հետ: Նրանք ամէն ինչ արեցին, որ ես չդառնամ նախագահ», - ֆրանսացու խօսքը մէջբերում է sportbce-ն:

Յիշեցնենք, որ 2007-2017-ը Պլատինին զբաղեցնում էր ՈւեթԱ-ի նախագահի պաշտօնը: 2015-ի աշնանը 64-ամեայ ֆրանսացին ձերբակալուել էր 2022 թուականի աշխարհի առաջնութիւնը Քաթարում անցկացնելու հետաքննութեան գործով եւ ֆուտբոլային գործունէութիւնից հեռացուել 8 տարով: Յետագայում որակազրկումը կրճատուեց 4 տարով: Նա մեղադրուեց էր կոռուպցիայի մէջ: Աւելի ուշ Պլատինինին ազատ էին արձակել, իսկ 2019 թուականի Հոկտեմբերի 8-ին լրացել էր նրա քառամեայ որակազրկման ժամկէտը:

Նախորդ տարուայ Դեկտեմբերին ՖԻՖԱ-ն դատի էր տուել կազմակերպութեան նախկին նախագահ Յոզեֆ Բլատերին ու Պլատինինին՝ պահանջելով հետ վերադարձնել 2011-ին ֆրանսացուն փոխանցուած 2 միլիոն շուէյցարական ֆրանկը (մօտ 1.8 միլիոն եւրօ):